

ԾԱՂԻԿ ԿԵ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: — Հա-
տը 40 փարա:

Բաժանորդագրին ԿԱՆԻՍԻԿ — Պոլսոյ համար տարե-
կան 45 դրշ: վեցամսեայ 23 դրշ: եռամսեայ 12 դրշ: —
Գաւառաց համար տարեկան 30 դրշ: վեցամսեայ 26
դրշ: եռամսեայ 14 դրշ:

Ռուսիոյ համար տարեկան հինգ ռուբլի: Ուրիշ եր-
կիրներու համար 12 ֆրանք:

Գաւառներէն դուրսման ժամանակ կ'ընդունուի:
Միայն երեք թիւ ապստիկ կը զրկուի: Այնուհետեւ
բաժանորդագրին չը վճարողը կը դադարի թերթը ընդու-
նելէ:

Ծանուցման տողը 2 դրշ:

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ԾԱՂԻԿ

Լ Ր Ա Փ Ի Ր

ԾԱՂԻԿ Ի ՎԵՐԱԵՐԵՔԱԼ ԱՄԷՆ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ ԳԻՄԷԼ
ԱՌ ՏՅՈՐԷՑ-ՀՐԱՄԱՐԱԿԻՆ 8042ԱՆ Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

Պոլիս, Էսկի-Ջապիթի, Պերպերեան Տպարան

درعليه ده اسكي ضبطه زقاعده بربريان مطبعه سنده
«زاغيك» غزتهسى مديرى پالاقاشيان حوونان

HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien «Dzaghik»,
Rue Esski-Zabtié, Imprimerie N. Bérbérian
CONSTANTINOPLE

ՆՈՐ ԵՐԶԱՆ — Ա. ՏԱՐԻ. ԹԻՒ 30

ՇԱԲԱԹ

6 ԱՊՐԵԼ 1891

ԱԶԴԱԳԻՐ

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ

ԾԱՂԻԿ նամ էրմէնիճէ կազմէժա՝ մու-
ղայիլը ուսուլ վէ գաիտէ հարէքէթէ
ճիւրաթ էյլէմէքտէ օլտուղնտան, թէ-
քէրիւրի հալինտէ միւճաղաթը լաղըմէ
իճրա օլտնմագ իւզրէ, շիմտիլիք իշպու
իթմարնամէ իլէ իթիֆա գըլընտը:

2 Բամաղան 1308

30 Մարտ 1307

Թարգմանութիւն

ԾԱՂԻԿ անուն Հայերէն լրագիրն՝ օ-
րինաց հակառակը դործելու համարձա-
կած լինելով, կը ծանուցուի իրեն թէ
այս անգամ՝ ներկայ աղագիրը բաւա-
կան համարուելով, եթէ կրկին միւսնոյն
բնթացքին մէջ գտնուի. հարկ եղած
պատիժը ի դործ պիտի դրուի:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամեն. Ս. Պատրիարքն անցեալ չարաթ
օր Մաքրիւլիէն Ղալաթիա գալով՝ նախագա-
հեց Խառն Ժողովոյ նստին ուր խորհրդակցու-
թիւնը կատարուեցան ի Պատրիարքարան հա-
ղորդուած Եպարքոսական պաշտօնադրոյ մա-
սին:

— Քաղ. Ժողովն Ս. Պատրիարք Հօր նա-
խագահութեամբ չորեքշաբթի օր գումարուե-
լով, զրաղեցաւ գաւառական ու յարաբերա-
կան խնդիրներով:

— Ամեն. Ս. Պատրիարք Հայրն վերստին չըր-
ջարեալական մ'ուղղեց ի գաւառաւ, յանձնարա-
րելով որ ըստ նախորդ հրահանգի փութացը-
նեն կեդրոնական երեսփոխանաց ընտրու-
թիւնը:

— Անցեալ չարաթ օր ծանուցինք թէ
«Պրուսայի Առաջնորդ Գեր. Տ. Բարթոլոմի-
մէոս Սրբազան Արքեպիսկոպոս վաղը, կիւ-
րակէ, մայրաքաղաքս կուգայ իւր տկարու-
թիւնը դարմանելու համար»: Պրուսայէն կը
գրեն մեզ թէ տեղւոյն ազգայինք իրենց սի-
րելի առաջնորդին դիմած եւ յատկապէս
խնդրած լինելով որ չը մեկնի Ս. Զատիկի
տօնէն առաջ, Նորին Սրբազնութիւն յօժա-
րած է յետաձգել իւր ուղևորութիւնը:

— Ամեն. Տ. Մեղիսեպեկ Սրբազան Արք-
եպիսկոպոս՝ որ անցեալ տարի Մեծ-պահոց
մէջ Գաւառիւ Ս. Թադեոս եկեղեցին՝
կիւրակէ առաւօտները՝ Տառնարանեայ պատ-
ուիրանքը կը բացատրէր, և կանանց համար
յատկապէս ճաշու-ժամու օրերն՝ աչրունա-

կան «Հայր-մեր» աղօթքը կը պարզաբանէր,
այս տարի սկսած է «Հաւատամք»ի օրուան
Աւետարանը բացատրել իմաստալից և ներ-
հուն ծանօթութեամբք և բազմակողմանի
հմտութեամբք:

Անցեալ կիւրակէ օր՝ աւուր պատշաճի
նիւթն ընտրելով Նորին Ամենապատուութիւ-
նը, զաւարաց վրայ գեղեցիկ քարոզ մը խօ-
սած է՝ խստիւ ձաղկելով սուտ բարեպաշ-
տութիւնը:

Տարակոյս չը կայ որ այսպիսի աւետարա-
նական քարոզութիւնք գոհութիւն կը պատ-
ճառեն ունեկիւր Ժողովրդեան, մանաւանդ
երբ բեմախօսն՝ Մուրատեան Սրբազանի նը-
ման օրինակելի հանգամանք ու անվիճելի
արժանեօք օժտեալ եկեղեցական մ'է:

Իրաւունք չունի՞ ուրեմն Մայր-եկեղեցւոյ
և Միացեալ թաղից Ժողովուրդը՝ ծարաւն
զգալու Նորին Սրբազնութեան աւետարանա-
չունչ քարոզներուն, և այդ փափաքն իրա-
գործելու համար Քահանայից դասուն և Թա-
ղական Խորհրդոյ ձեւամարտի շիր ընելու՝ առ
որ անկ է:

Հստ մեզ, աւելի լաւ կը լինէր՝ որ Նորին
Սրբազնութիւնը ի գիր առնուր իւր քարոզ-
ներն և հրատարակութեան տալով՝ ընտրելա-
գոյն Քաղաքացիք մը պատրաստէր, յօգուտ
հեռուոր և մերձուոր համայն ազգայնոց:

Գիտեմք որ Ամեն. Տ. Մեղիսեպեկ Սըր-
բազան՝ իւր եկեղեցական Պատմութիւնը՝ նախ
իրեւ դասագիրք պատրաստած, և յետոյ բազ-
մայ խնդրանք զայն հրատարակել տալու
բարեհաճած է, որով ազգային մատենադրու-
թիւնը հատընտիր գոհարով մը զարդարած:

— Ս. Պատրիարք Հայրն հինգշաբթի օր
Պատրիարքարան գալով, զրաղեցաւ այլ և այլ
խնդիրներով:

Տէր Միխայէլ Տ. Վահան վարդապետ
նոյն օրը Պատրիարքարան գալով, Ս. Պատ-
րիարք Հօր և Պատրիարքական Փոխանորդ
Գեր. Տ. Գէորգ Մ. վարդապետի հետ տե-
սակցելէ յետոյ, վերստին Ս. Փրկչեան Ազգ.
Հիւանդանոցը գնաց:

— Շարթուս Վանայ Առաջնորդարանէն
հեռագիր եկած է ի Պատրիարքարան թէ մայ-
րաքաղաքս գտնուող պանդուխտ վաճառա-
կանի մը յանձնարարուած է՝ Վանայ Պատր.
Փոխանորդ Արք. Տ. Յովսէփ Մ. վարդապետ
Այվաղեանին 80 լիրայի գումար մը տալ իւր-
եւ ճանապարհածախս, ըստ որոշման Կեդր.
Ազգ. Վարչութեան: Ամէն պարագայի մէջ,
չեմք կարծեր որ Ն. Արքանապատուութիւն
կարենայ մեկնիլ Ս. Զատիկի տօնէ՝ առաջ:

— Մալաթիայէն Ազգային Երեսփոխան
ընտրուած է Ազն. Սարգիս էֆ. Կիւլլէնեկեան:

— Տնտեսական Խորհուրդն չորեքշաբթի
օր Սեթեան Մեծ. Միհրան էֆէնտիի առե-
նապետութեամբ գումարուելով, Պէյքօղի ե-
կեղեցւոյն մէջ կատարուած զոգութեան գէպ-

քին համար տեղւոյն Թաղական Խորհրդոյ ա-
տենապետին բացատրութիւնները լսելէ յե-
տոյ, որոշեց պաշտօնական ծանուցմամբ ազ-
գարարել բոլոր ազգայնոց և միանգամայն,
մասնաւոր շրջաբերականաւ մը՝ ուղղեալ առ
Թաղական Խորհուրդն՝ յիշեցնել այս վերջնոց
1890 սեպտեմբեր 15 թուական պաշտօնագիրն
որով խստիւ յանձնարարուած էր Թաղական
Խորհրդոյ ամէն հոգ ու խնամք տանիլ իրենց
մատակարարութեան յանձնեալ եկեղեցիներու
գոյլից անկորուստ պահպանման համար, քննե-
լով միանգամայն որ ժամակուծք պարկեշտ,
վստահելի և պարտաճանաչ լինին: Խորհուր-
դը որոշեց նաեւ ծանուցանել թէ Թաղական
Խորհուրդք անձնապէս պատասխանատու պի-
տի մնան, եթէ այսպիսի դէպք մը տեղի ու-
նենայ իրենց Թաղին եկեղեցեաց մէջ:

— Բնիկ Աղբիւնուպոլսեցի Մեծ. Պօղոս
էֆ. Աստարճեան, որ ասկից առաջ ձեռնար-
կած հանգանակութեան արդեամբ ի նորոյ
կառուցած էր տեղւոյն վարժարանն և մի
քանի կալուածներ գնելով իբրեւ եկամուտ
յատկացուցած էր նոյն հաստատութեան,
այս անգամ՝ իբրեւ արդիւնք շարունակու-
թեան նոյն հանգանակութեան՝ 65 օսմ. ոս-
կի արժէքով կալուած մի ևս գնած և յատ-
կացուցած է նոյն վարժարանին:

— Սեւանիկի Հոգեւոր հովիւ Խաչօեան
Արք. Տ. Արսէն քահանայի Աւագութեան
աստիճան շնորհուելուն առթիւ, տեղւոյն
Հոգ. Պատ. Ժողովն շնորհակալութեան գիր
ղրկած է առ Ս. Պատրիարք Հայրն:

— Երուսաղէմական ուխտաւորութիւնն
այս տարի բաւական արդիւնաւոր կը կարծուի
լինիլ Ս. Յակոբեանց Միաբանութեան համար:
Հեռուոր գաւառներէ անդ դիմող ուխտա-
ւորք արդէն իսկ ստուար թիւ մը կը կազմեն
եղեր Մայրաքաղաքէն ալ ոչ նուազ բարեպաշտ
ազգայինք գնացած են յերուսաղէմ: Չորեք-
շաբթի աւուր Խալիվական ընկերութեան չո-
գեհաւով մեկնեցան նաեւ Գալոցասէր Տիկ-
նանց ընկերութեան անգամուհիններէն Ազն.
Տիկին Աննա Էսաեան, Ազգանուէր-Հայուհեաց
ընկերութեան գործօն անգամուհիններէն Տի-
կին Տէր-Յարութիւնեան, և Գաւառիւ Սե-
րափեան վարժարանի խնամակալուհիներէն
Տիկին Աղասեան, Մեծ. Գօռանեան Սարգիս,
Աղասեան Անտօն էֆէնտիք, և Գնաճեան
Յարութիւն էֆէնտիք՝ հանգերձ ընտանեօք:

— Գոհութեամբ կ'իմանամք թէ բնիկ Հա-
ճնցի Տօքթ. Ստեփան էֆ. Թէրզեան, որ
ընթերցողաց ծանօթ է մերթ ընդ մերթ ի
լրագիրս հրատարակած իւր առողջապահա-
կան յօդուածներով, բոլորելով մայրաքաղա-
քիս կայսերական քաղաքային բժշկական
վարժարանին ընթացքը, անցեալ շաբթու
ստացեր է իւր բժշկական վկայագիրն:

— Ամեն. Ս. Պատրիարք Հայրն՝ որոշ-
մամբ Կրօն. Ժողովոյ՝ հետեւեալ շրջաբերականն

ուղղեց առաջնորդաց, վանահարց և այլ գաւառական հոգեւոր պաշտօնէից .

«Կը յիշէք անշուշտ որոշմամբ Կրօնական ժողովոյ Ազգային Կեդրոնական Վարչութեան այլ և այլ անգամ առ Ձեզ ուղղեալ Պատրիարքական շրջաբերականներն, որք ծանուցած են, թէ Ձեր հոգեւոր հովուութեան խնամոց յանձնեալ վիճակէն ո՛րք Քահանայ երբ հարկադրի թողուլ զեկեղեցիս, յորոյ վերայ ձեռնադրուած է, և ի Կոստանդնուպոլիս կամ այլ ուրեք երթալ, անպատճառ ի ձեռին ունենայ Ձեր և գաւառից Կրօնական ժողովոյ մի վիսյագիրն, յորում նշանակուած լինի իրաց ստոյգ եղելութիւնն և պանդխտելու պատճառն . առանց այս օրինական պայմանն կատարելու ի Կոստանդնուպոլիս ներկայացող Քահանայն ոչ միայն կարեկցութեան արժանի պիտի համարուէր, այլ և հարկ եղած անմիջական անօրինութիւնն ի գործ պիտի դրուէր այնպիսոյն նկատմամբ :

«Կրօնական ժողովն Ազգային Կեդրոնական Վարչութեան տեղեկանալով սակայն որ շատ տեղ զանցառութիւն կը լինի այս մասին, այս անգամ հարկ համարեցաք ոչ միայն կրկնել նախկին որոշումն և պահանջել նորա գործադրութիւնն, այլ և կը յաւելումք պատուիրել, թէ ո և է գաւառէ կամ վանքէ եկեղեցական պաշտօնեայ, որ Ձեր պաշտօնատեղին մուտ կը գործէ առանց առաջնորդին կամ վանահօր մասնաւոր ծանուցագրոյն և կամ Պատրիարքական մասնաւոր յանձնարարական թղթոյն, բնաւ չընդունիք, վասն զի շատ անգամ հոգեւորական կոչումն չունեցող և ի կըրօնաւորութենէ արգելեալ կամ ի սպառ լուծեալ անձինք այս կամ այն գաւառն երթալով ինքզինքնին Սարկաւադ, Քահանայ, Վարդապետ կը ձևացնեն և անխոհարար կը մերձենան ի մատակարարութիւն Ս. Խորհրդոց եկեղեցւոյ, մեր ժողովրդեան բարեպաշտութենէն օգուտ քաղելու յանդգնութեամբ, ինչպէս կը լսուի յաճախ :

«Կան նաև տմանք ի Քահանայից, որ եկեղեցւոյ մը վրայ Քահանայ ձեռնադրուելէ յետոյ կը բաժնուին այն եկեղեցիէն յորում ցրկեանս պաշտօնավարել ուխտած են առաջի Աստուծոյ, և անխնամ թողլով զժողովուրդն, թափաւորտ կեանք կ'անցնեն ի խնդիր իւրեանց անձնական ապրուստին . այնպիսիք իւրեւ ուխտադրութ արժանի չեն քահանայական պաշտօն վարելու ուրիշ գաւառի մը մէջ :

«Ձայս զգուշութիւն պատուիրելով Ձեր Սիրելիութեան, կը յուսամք նաև, որ Ձեր հոգեւոր Տեսչութեան ներքե գտնուած հոգեւորականները կը խրատէք և եկեղեցական կարգապահութեան պայմանաց համեմատ վարուիլ կը յորդորէք միշտ ի բարեկարգութիւն Սուրբ Եկեղեցւոյ :

Ողջ լերուք ի Տէր

26 մարտ 1891 (Կնիք Ս. Պատրիարք Հօր)

— Նալը Խանէն (Խնկիւրի) կը գրեն թէ Ս. Ծննդեան տօնի չորրորդ օրը տեղւոյն նորաշէն եկեղեցւոյն գմբէթը փլչելով, ամբողջ շէնքը հիմնայատակ կործաներ է :

— Ճարտարապետ Թէլլաթեան Պետրոս էֆ. Տնտեսական խորհրդոյ որոշմամբ ի Քանիսիլի երթալով, տեղւոյն երկուստան Առաքելոց եկեղեցւոյ վերաշինութեան քննութիւնը կատարած և 480 լիւրայի ծախուց կարօտ լինելն տեղեկագրած է ի Պատրիարքարան : Կը հաւատեն թէ՛ եթէ նուազուրդի գրուի սոյն գործը, աւելի պակաս դնով ստանձնողներ պիտի լինին :

ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՔ

ԲԱՐԵՐԴ, 24 մարտ 1891. — Տարեգարս ծըննդեան վեց. Սուրբան Համիս Բ. Կայսեր. — Ո՛հ, ի՞նչ զուգադիպութիւն և ո՛րպիսի բարեբախտութիւն, երբ գարնանային նորարոգութ ծաղկանց և դալարեաց, սիւք հովերու հեղարոյր շնչմանց հետ, բարեբախտիկ եմք տօնել և ուրախանալ մեր Գթառատ կայսեր ծննդեան տարեդարձն, որ ամսոյս 14 (եչ) վայելուչ շուքով և նմանը գուն ուրեք տեսնուած պերճութեամբ տեղի ունեցաւ յետ միջօրէին : Խառնիճազանճ ամբոխ մը տեղական կառավարութեան լայն պողոտային վրայ խռոնեալ էր . հեծեալ և պահեստի զօրաց վաշտերն ամենայն ճշգրտահոգութեամբ կառավարութեան Դրան երկու կողմն կանգնած՝ որպէս հիպոկրիտ տեսիլ ծառուղեաց կ'ողջունէին զերթեկէլ-այցելուս : Քիչ յետոյ երեցաւ քաղաքիս Վեսմ. Քայմագամ պէյը պաշտօնական համագլխաւոր, իւր շուրջն ունենալով քաղաքական և զինուորական բարձրաստիճան պաշտօնեայներն, յորոց ոմանք ևս չքեղապէս զգեցած էին պաշտօնական համարըգեստներն :

Եկած էին Տաճկաց Բուշուիէ Դպրոցին և Հայոց Մեսրոպեան Կեդր. վարժարանի աշակերտք, ոյց վերջնոց կողմանէ յանուն Օգոս. Սուլթանի ձօնեալ մի քանի ընտիր երգեր երգուեցան և Տիօրէն-Գասաուր Գ. էֆ. Լուսպարոնեան ի դիմաց վարժարանի սանուց՝ պերճարտասանութեամբ ուղղերձ մը կարդաց, չընորհաւորելով զտարեդարձ Ծննդեան Օգոս. Կայսեր և ընդ որ ջերմագին բարեմաղթելով վասն երկարութեան տեղին կենաց և բարօրութեան նորին Կայսերական Վեհափառութեան, որոյ անսպառ շնորհները դարբնէ ի վեր վայելած և վայելիլ կոչուած է հաւատարիմ հպատակ հայ հասարակութիւնը : Հուսկ ուրիմն յատին կալով Միւֆթի էֆ. օրինական աղթք և բարեմաղթութիւններ ըրաւ . ներկայք «ամէններով կը թնդացնէին օգն. յաւարտ բարեմաղթութեանց՝ զօրաց վաշտն փողահարութեամբ և աշակերտք բարձրաձայն Ձօք ետեւ Փաշաեօնը կրկնելով մեկնեցան, որով փափու եցաւ ցերեկի չքահանայէնը :

Գիշերն ևս ամէն պաշտօնէից դռներուն և լուսամուտներուն վրայ լուսավառութիւնք կը փայլէին . մանաւանդ կառավարութեան պաշտօնատունն և Համիտիէ թաղին նորակառոյց զօրանոցն՝ լուսազարդեալ կամարներու ակնախօսիչ երևոյթներով, գոյնզգոյն կանթեղաց և երփներանգ լապտերաց շողջողունով կ'զնայլեցնէին զներկայս . անգաղար փամփուշտներ կ'արձակուէին, հրախաղութեանց ցոյցեր կը շարունակուէին, որոց ընդմիջարար մերթ ընդ մերթ հրացաններու որոտընդոտ ճայթումներն օղբ կ'աղմուկէին, որով սոյն հըրապոյրալից հանդէսը մեծ տպաւորութիւն ձգեց նեկայից վրայ և սրտաւորեց յարաժամ բարեմաղթու լինիլ նորին Կայսերական Վեհափառութեան բարեկեցութեանը և արեւշատութեանը համար :

ՎԱՀԱՆ

ԲԱՐԵՐԴ, 24 մարտ 1891. — Տէր Խմբադիր, ցաւօք սրտի կը յայտարարեմ որ տեղւոյս աղագային վիճակն կը խորացայ գերեզմանի մէջ՝ մեռեալ Ղազարու նման . Յիսուս մը պէտք է զայն կանգնեցնելու . աւելորդ կը համարիմ սոյն պատեհութեամբ մշտնել մանրամասնութեանց մէջ, վերապահե-

լով զայն ուրիշ ժամանակի : Արդէն քաջածանօթ է քաղաքիս աղգ. անիշխան վիճակն յաւըս Պատրիարքարանից իւր ամէն պարագաներով, սակայն չը գիտեմք թէ Պատրիարքարանն ի՞նչու համար անտարբեր կը մնայ մեր մասին, և ինչպէս դարձուցած է իւր ուշը ուրիշ վիճակաց վրայ, Բարերգն ի՞նչու կը մոռնայ և կը զրկէ իւր կարեւորութենէն՝ լքանելով զայն իւր յոռի կացութեան մէջ, որով աղգըն միշտ տուժած է և պիտի տուժէ, եթէ անմիջական դարման մը չը տրուի . ապագայն խիստ վնասաբեր է և աղետաբեր :

Գալով աղգ. կրթական խնդրոյն, այս ալ գրեթէ ժամանակէ մ'ի վեր բաղդակից էր աղգ. վիճակին, սակայն չորս ամիսներ յառաջ չնորհիւ Մեծ . Աղապապեան էֆէնդիներու և այլ քաղաքիս մի քանի երեւելեաց, առժամապէս Հոգաբարձութիւն մը կազմուելով փութաց նոր եռանդով վառեալ Մեսրոփեան վարժարանի ի հիմանց քայքայեալ վիճակն վերստին բարեկարգել, հետեւարար իւր առաջին գործն եղաւ վարժարանիս համար ուսուցիչ ընտրել Մեծ . Գարրիէլ էֆ. Լուսպարոնեանը : Յիշեալի պաշտօնավարութենէ չորս ամիս վերջը, անցեալ Փետրուար ամսոյ 26ին, Մեսրոփեան վարժարանի մէջ ի ներկայութեան Առաջնորդ Գերապատիւ Տէր Ամբրոսիոս Ս. Հօր և ժողովրդային ամէն դասակարգէ խուռն բազմութեան մը, տեղի ունեցաւ աղայոց ուսման առաջին քննութիւնն որոյ ըստ բաւականին տեսնուեցաւ արդիւնքն . եթէ Հոգաբարձութիւնն սոյն սկզբանց վրայ պատրաստելով դպրոցական ծրագիրն, դարձնէ իւր բոլոր ուշադրութիւնը ուսուցիչներու կարողութեանց և աշխատութեանց վրայ, և անգաղար հսկէ դպրոցի բարեկարգութեան, մանկուոյն ուսման յառաջդիմութեանը, ապագայ քննութեան համար այժմէն մեծ յոյսեր կրնամք գուշակել :

Տա՛յր երկինք, որ Լուսպարոնեան էֆէնտի լուսավորած և անդուլ աշխատութեան արդիւնքն լինէր տղայոց դեռարողմը մտաց և սրտին վրայ ուսման ու գիտութեան ճառագայթներն դիւրուսոյց եղանակաւ արժարծելու, որուն անտարակոյս եմք, և ահա մեր յոյսերն լիովին պսակուած և իրականացած պիտի տեսնեմք . յայնժամ Բարերգըն աներկբայ իւր կրթական նոր քայլը պիտի առնու, յայնժամ Բարերգըն պիտի սթափի պահ մը յառաջ մտանդաւած ատելութեան և կուսակցութեան խիստ դժօխմբեր հետեւանքներէն, որոցմով ցարդ ծանրապէս տուժած է :

Քաղաքիս առեւտրական վիճակն երեք չորս ամիսներէ ի վեր է որ բոլորովին դադրած է . արմտեաց գներն անկեալ վիճակի մէջ են : Ձմրան սաստկութեան հետքերն տակաւին չեն անհետացած : Գիւղային երթեկեկութիւնք գրեթէ ընդհատուած, ժողովուրդն ցուրտի խտուրթենէ և առեւտրական գործոց անձկութենէ յուսահատ՝ մինչև երկոյ սրճարաններու մէջ փակեալ իւր դառն վիճակ կ'ողբայ . հաղիւ քանի մը օրերէ ի վեր ձիւնապատ լեռանց գագաթներն տակաւ առ տակաւ սևնալ սկսած են . երկրագործ և վաճառական անհամբեր կ'սպասեն դարնան, որոնց միակ յոյսն և նեցուկն է, պատրաստելու ապագայ ձմեռուան համար իւրեանց հաց ու պարէնն :

Ընդունեցէք, Տէր, անկեղծ յարգանքս հաւատին :

ԱՍԱՏՈՒՐ



ՄԻՔԱՆԻԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ

ՄԻՔԱՆԻԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ

Էր երբեմն յորում Միթարեանք Հայ ժողովրդի մտաց մէջ մեծ տեղ կը գրաւէին. աւելն Հայ, փոքր ի շատէ ուսումնասէր, կ'ուզէր իւր մտքի ջանք վառել Ս. Ղազարու լուսով, բայց հետզհետէ մերազնեայք կը մոռնան Ս. Ղազարը, մոռացութիւնը կը ծանրանայ այդ միաբանութեան վրայ իրրեւ գերեզմանի կափարիչ քարն: Եթէ երբեմն երբեմն ծեր Նահապետն հին յիշատակներ չյուզէ, ազգը բոլորովին պիտի մոռնայ Ագրիականի գլխային գիրկն ապաստանած այդ հինաւուրց միաբաններն:

Էր այս յեղաշրջում, և ո՞վ է մեղաւորն: Շատեր ազգին ուսմանց մասին անտիրելութիւնը կամ սառն անտարբերութիւնը յառաջ կը բերեն, և առանց խորապէս պատճառները հետազոտելու վճիռ կ'արձակեն թէ Միթարեանք անմեղ են:

Ստոյգ է որ ուսման և կրթութեան այն ինչ վարժուած ազգ մը չկրնար լիովին ճաշակն առնուլ ճշմարիտ բարեաց, ուստի փոխանակ անոր տգիտութիւնը նշաւակելու՝ հարկ է նորանոր զոհողութիւններ յանձն առնուլ անոր սիրոյն համար, գորովանօք առաջնորդել անոր առաջին գիւրաթեքութեանց, գեղեցիկ միջոցներով արծարծելով սէր ուսմանց: Այսպէս տակաւ ազգն կ'ընտելանայ, և ինքնաբերաբար կը մօտենայ լուսոյ աղբիւրին: Այդ փրկարար ճգունք և բարեշրջման օրէնք կը փոխեն ազգին գաղափարները:

Միթարեանք կ'զգան իրենց գործին վըսեմութիւնը, և մի և նոյն ժամանակ կ'ըմբռնեն անշուշտ Ազգին վիճակը, անոր բազմազան պէտքերը, մանաւանդ անոր ուսման և կրթութեան մէջ յառաջանալու էական կէտն, կ'զգան թէ ինչ ծառայութիւններ կրնան մատուցանել ըստ տրամադրութեան կտակի իրենց բազմերախտ Հիմնադրին, ինչ մեծ դեր կրնան կատարել Ազգային դատարարականութեան խնդրոյն մէջ: Եղո՛ւկ, որ ազգային շահուց խորին գիտակցութեամբ հանգերծ չունին ազգու մասնակցութիւն մեզ հետ մեր յառաջդիմութեան համար: Այսպիսի պատճառներով, նաեւ դաւանաբանական խնդրոց մէջ իրենց հետեւած ուղղութեամբ, որով Միթարեանք հեռացած են Մեծին Միթարայ շաւղէն, Ազգն իրաւամբ վշտացած է Ս. Ղազարու դէմ:

Մեք չեմք հաւատար թէ Միթարեանք ունենան մեզ նկատմամբ սոսկ պղատնական սէր մը: Միայն կը ցաւիմք երբ կը տեսնեմք թէ բազմիցս բարերար անձերէ մեծագումար դրամներ կ'ընդունին զանազան օգտակար գրոց հրատարակութեան նպատուղ, գպրոցաց հաստատման համար կտակեալ, և այս կրկին նպատակներու մէջ ալ կը մեղանշեն, որովհետեւ իրաւ է որ հրատարակած են գրքեր, բայց անոնց համար այնպիսի գներ ու բոլած են, որով անմատչելի ըրած են զանոնք ուսումնասէր ժողովրդեան, առանց ի նկատ առնել տնտեսական պայմաններ: Այսպէս Մեկենասներու արդեամբք տպագրեալ գրքերն իսկ կարի թանկ եղած են: Երբեք, օրինակի համար, Մեծ Հայկազեան բառագիրքն, որոյ տպագրութեան ծախուց համար անմահ Բարերարն Պեղծեան և այլք կարեւոր գումարներ տուած են, կը ծախուի

130 Փրանքի: Զոհրապեան քառահատոր Աստուածաշունչն՝ որ Ամերիկայի Աստուածաշունչի ընկերութեան ծախիւք տպեալ է, կը ծախուի այժմ 100 Փրանքի: Ալիշանի Արարատն նոյնպէս 100 Փրանք է: ասոնց օրինակին հետեւած է Քաջունույ գլուխ գործոցն Գաղիերէն-Հայերէն բառգիրքն, որոյ բաժանորդագիրն որչափ որ 50 Փրանք է, յոյս մեծ ունիմք թէ ի վերջոյ 100 Փրանքի պիտի բարձրանայ: Իրենց հոյակապ գործերէն յետոյ անցնինք միջին գործերու: Հ. Ներսէս Սարգսեանի Տեղագրութիւնն 7 Փրանքէն բարձրացած է 23 Փրանքի, Հոմերի Իլիականն 15 Փրանքի, Հ. Ա. Բագրատունույ Զարգացելոյն 23 Փրանքի, և ինչ և ինչ:

Բայց մրցումը միշտ և միշտ օգտակար է, վասն զի եթէ Պոլիս, Տիգրիս, Երուսաղէմ, Փարիզ, Բեդրսպուրի չհրատարակին աժան գնով նախնեաց գրքեր, Միթարեանք այդ գրքերն ալ չպիտի խղճային մեծագնի վաճառել, ինչպէս Եգիպտոս, Եղիշէն, Ուրեմեայի, ևն:

Գրարար գրքեր հրատարակելու կարծես մենաշնորհն վայելող այս Միթարեանքի գոցէ պատճառ եղած է ցուցնել գրարար իրրեւ մի ժանտ մօրու՝ որ ի բաց կը վանէ իւր անհարազատ որդիներն, և այսօր ժողովուրդն սոսկմամբ ձեռք կը կարկառէ գրարար գրքերու, և Պոլսոյ մեր Հայ գրավաճառք կը աւելնայ իրաւամբ թէ ժողովուրդն չգնէր գրարար գիրք: Ըսե՛մք թէ միակ բարեշրջման խնդիր է այս, որով յետ այսօրիկ աշխարհիկ լեզուի տեղի կուտայ գրարարն: Իրաւ է որ աշխարհարարն ներկային մէջ ընդարձակած է իւր իրաւանց սահման, սակայն ամէն ճշմարիտ հայագիր պիտի փափաքէր որ գրարարն միշտ հասկնալի լինէր, ժողովրդական աժան տպագրութիւններ լինէին նախնեաց գրոց, հմուտ ծանօթութեամբ լուսարանեալ, և այն տոտեն ամէն ոք նախամեծար պիտի համարէր, ի մէջ այլոց, գրարար Ուրեմեայի քան աշխարհարարն:

Նպատակ չունիմք աստ լեզուի խնդիր յուզել և ոչ իսկ աշխարհարարն իրրեւ խոսքան ինչ ցուցնել, որոյ զարգացման ջերմապէս փափաքող եմք միշտ: Միայն թէ ազգային լուսաւորութեան դասն գէթ մասամբ հրապարակ բերել ուղեցինք այս մի քանի տողերով, յորս ցաւօք կը տեսնեմք թէ Միթարեանք հետզհետէ կը կորսնցնեն իրենց իրաւունքներն ընդհանուրին երախտագրութեան վրայ:

Բայց միթէ միայն իրենց գրոց ծանրագնի լինելու տեսակէտով է որ չեն մատուցաներ իրական ծառայութիւն: ո՛չ, կան նաեւ այլ պատճառներ՝ զորս պարզած է Աղեքսանդր Երիցեանց Վեցեփիկի Միթարեանք գործով: ուստի աստ կ'ընդհատեմք մեր խօսքն՝ ընթերցողներն յղելով Երիցեանցի գրքին:

Իսկիւսար

Ս. ԳԱՐԱՄԱՃԵԱՆ

ՍՈՒՎԸՆԻՐ ՏԸ ՀԱՆՔԻ

Տօքթ. Մալգեան էֆէնտիի դուստր և Դպրոցասէր Տիկնանց ընկերութեան գործօն անդամուհիներէն Ազն. Օրիորդ Սարիքիկ Մալգեանի կատարեալ յաջողակութեամբ պատրաստած այս Բօլղա Մազուրգան՝ կ'արժէ որ մեր հայ տուններն մէջ ամէն դաշնակի վրայ ունենայ իւր արժանաւոր տեղը:

Կեդրոնատեղին է Բերա՝ Գոմէնախիէր, Ատամ (Բաւաթ Հաճօրուլօ) և Պէլլուի (Բասաթ տ'Եօրէօր):

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՏԻՐԿԵՐԵԱՆ ԲԱՐՍԵՂ ԷՖ.

ԵՊ

Հ. Հ.

Շուրջ 5 ամիսներ անցան յորմեհետէ հողին յանձնեցինք, ցուրտ և անձրևոտ օր մը, ազգային ծանօթ բազմաշխատ ուսուցիչներէն Զափագիտութեան դասատու Տիւրկէրեան Բարսեղ էֆէնտին, ոյր «Դադադին առթիւ» տեղական թերթի մի մէջ յօդուած մը հրատարակեց մի ոք Հ. Հ., որով Գերապատիւ Սրբազանէ մը զուրցուած դամբանականի մը մի քանի խօսքերն անտեղի, անյարմար և անիրաւ նկատելով, վարժապետաց վրայ սկսաւ թափել ամէն նախատինք ու արհամարհանք, և ջանաց ցուցնել թէ՛ վարժապետներն ակրնկալելու չեն ի փոխառէն իրենց աւխաւանաց՝ անգործ կեանքի մը վայելումը, և արժանի իսկ են ժողովրդեան արհամարհանաց. ըստ որում ամէն ալ (չը մոռնամք ըսել թէ յօդուածագիրը բացառութիւնները կը յարգէ) տգէտ, անկիրթ, խմատակ մարդիկ են, ըստ որում գրքեր չեն հրատարակած որ «իրենց ձեռքերուն և շնչոյն տակ որպէս թէ կրնան սերունդը բան մ'ունենայ, իրական առնական բան մը, գէթ թղթի կտոր մը, հատոր մը իր շնչովը, իր կեանքովը, իր լուսովը, իր հոգեւովը...»:

Թէ և սոյն յօդուած, այն ատեն, իր հանգուցեալը նշանակէտ առնելով գրուած բան մը, անոր բազմաթիւ ծանօթներուն զարոյթը գրգռած էր, այլ ոչ ոք փափաքած էր հրապարակաւ հարկ եղածը գրել ի պաշտպանութիւն հանգուցեալ յիշատակին, նկատելով որ յօդուածն որքան զայրացուցիչ երևոյթ մը ունի, այնքան ալ ոչ-լուրջ ոգի մը կը կրէ: Բայց այժմ որ Հ. Հ. — միւրք անոնց վիզը որք մեզ հաւատացուցին թէ Հ. Հ. և Հրանտ մի և նոյն անձն են — կը գտնուի նաեւ ուրիշ մի հին վարժապետի դադադի առաջ և հակառակ նախորդին նկատմամբ առած գիրքին, պատրաստուած է «Ալմատադիի ջրով լուացուած արձան» կանգնելու և «Կեդրոնականի ու Սրբաւատանոցի ներկայացուցիչներով» պըճնադարգեալ «պատարագ գրուցել» տալու — քանի որ աշակերտած է ինքն հանգուցեալ Միթարեանի —, առթիւ կուտայ մեզ խզել մեր լուսնիւն և իրեն ու իրեն համախոհից համառօտիւ ծանօթացնել հանգուցեալ Տիւրկէրեան էֆէնտին որ իրենց կարծածին պէս պարզ վարժապետ մը չ'է եղած, թէ և այսու ըսել չ'եմք ուղեր թէ զՏիւրկէրեան էֆէնտի կ'ուզեմք ցուցնել իրր Սիրօտ կամ Թառնիէ կամ Պրիօ, այլ մեր ազգին մէջ իր չափագիտութեան ուսուցիչ և ջերմ աշխատող այդ ճիւղին, իւր օգուտներն ունեցած է, և այդ օգուտներն էին որ իրեն արդիւնաւոր բազմաշխատութիւնն ի վեր հանելով՝ գրեցինք քարոզիչ Սրբազանն նորա դադադին վրայ այն խօսքերն ընել, որոց ի լուր ջիղերն գըրգռուած են Պ. Հո—Հոյին:

Տիւրկէրեան էֆէնտի իւր կրթութիւնն և ուսումն ասած էր Սկիւտարու ճեմարանէն և 15 տարեկան հասակին մէջ այդ վարժարանին մէջ օգնական ուսուցչի պաշտօն սկսած է վարել, և անկէ վերջ թէ և պարբերաբար առնաւորական⁽¹⁾ գործերով և պարբերաբար ու-

(1) Ո՞վ է որ միշտ + 1ին ետեւէն չը վազէր, երբ մանաւանդ բազմաթիւ ընտանիքի մը օրապահիկն շահելու հարկին մէջ գտնուի:

սուցչութեամբ զբաղած է, բայց միշտ իւր զբաղմանց մէջ մեծ տեղ բռնողը գաղափարաբանութիւնն եղած է, շուրջ 25-30 տարիներ ուսուցչութեան և Տնօրէնութեան պաշտօններ վարած է Պոլսոյ գլխաւոր կեդրոններու մէջ, ինչպէս են Ղալաթիա, Սկիւտար, Պէշիկթաշ, Լայն, և բազմաթիւ մասնաւոր դասեր ունեցած է, այնպէս որ կրնամք գտնել այսօր իւր աշակերտներէն, ուսուցչական մարմնոյն մէջ՝ յառաջդիմաւոր անհատներ, առեւտրական ասպարիզին մէջ՝ ծանօթ անձնաւորութիւններ, կամրջող և խճուղեաց Գոնիւքթօններուն մէջ՝ գործունեաց երիտասարդներ: Եւ գաղափար մը տալու համար իւր աշակերտաց ազգած հայրազիր համակրանաց վրայ, հետեւեալը կը հրատարակեմք, զոր իւր աշակերտներէն մաս մը գրած են իրեն՝ յեզիպոս ուսուցչական պաշտօն վարելու համար մեկնած պահուն:

« Իւր սիրելի Դասատու

« Մեծապէս յուզուած եմք այս վայրկենիս՝ « յորում գրիչ ի ձեռին կը ճգնիմք երախտա- « գիտութեան քանի մը խօսք թոթովել... » « Ո՛հ, սրտերնիս կոտրած է, և մեր սրտին « վրայ այս անհնարին ազդեցութիւնը ներ- « գործող բանն է այն հայրական ջանքն, « խնամքն և քրտինքն, զոր անդադար երկու « տարիէ ի վեր թափեցիք մեզի համար: « Յուզուեցէ՛ք, կըսեմք, դուք ալ, որ կըն- « օ գունիք մեր այս նամակը՝ որոյ մէջ մի տա- « ւերը վշտագին արտասուքով նշանակուե- « ցան, յուզուեցէ՛ք, վասն զի երախտագէտ « աշակերտներ կը թողուք, որք կըսեն Ձեզ « սրտաբեկութեամբ, երթա՛ք բարեալ... »

« Երթա՛ք բարեալ, բայց մի մոռնայք ըզ- « մեզ, մենք չ'ենք կրնար մոռնալ զՁեզ... »

« Երթա՛ք բարեալ. սրտաբեկութեամբ և « աճապարանօք զրուած տաւեր ի՛նչ իմաստ « կրնան յօդել: Ո՛հ, երախտապարտ եմք և « կը մնամք յաւերժ... »

« 1870 Մայիս 30

« Ձեր աշակերտք

« Զիվան Ղ. Մանուկեան, Սեդրակ Ս. Մա- « նուկեան, Յակոբ Զամաճեան, Արմենակ Մ. « Մանուկեան, Ռուբէն Ղ. Մանուկեան, « Պետրոս Մանուկեան, Բարսեղ Ս. Մանուկ- « եան, Տիգրան Ս. Մանուկեան, Միհրան « Մանուկեան, Միսաք Մանուկեան, Մկրտիչ « Ս. Մանուկեան, Արսէն Ղ. Մանուկեան »:

Տիւրկերեան էֆէնտի հրատարակած է 1853 թուին Թուարանութիւն մը, որ կարծեմ առաջինն էր Պոլսոյ մէջ հրատարակեալ Թուարանութեանց, և այսօր, բաց ի հատա- կառոր գրութեաներէ, ինչպէս են կիսկատար Դրահաշիւ մը, երկրաշափութեան մը մէկ մա- սը, և գործնական երկրաշափութեան վերա- բերեալ այլ և այլ խնդիրք, ձեռնք, և այլն, կը գտնեմք իւր թղթոց մէջ ձեռագիր ըն- դարձակ եռանկիւնաշափութիւն մը՝ ամբողջ, տեսական և գործնական բազմաթիւ խնդիր- ներով և անոնց լուծուիներովը ճոխացած, երկրորդական բարձրագոյն վարժարանաց հա- մար գործածելի(1):

Սոյն ձեռագիր եռանկիւնաշափութիւն, որ ոչ փաղւած մ'է, և ոչ անմիջ յառաջար- ցով մը բարգմանուած հաւաքածոյ մը, ինքնին ջախջախում մ'է Հո—Հոյն գաղափարաց և ապացոյց Տիւրկերեան էֆէնտիին կարեւոր

(1) Սոյն կարեւոր աշխատութեան համար կը հրաւի- րեմք հանգուցելոյն բոլոր աշակերտներն և ուսումնասէր ազգայիններն որ հանգումակութիւն մ'ընելով զայն հը- րատարակելու ձեռնարկեն:

ուսուցիչ մը լինելուն, և աշխատասէր ոգւոյ մը բացակայութեամբը իւր ժամանակը Սի- թին աղայի սրճարանին մէջ անուշադիւ և քալ- լովով չանցնելուն(2):

Եթէ Հո—Հո գիւրկերեան էֆէնտի տե- սած է սրճարանի մէջ խաղաղով, պէտք չ'էր հետեցներ թէ նա աշխատող մը չ'էր. երբ Տիւրկերեան էֆէնտի սրճարան կ'երթար, և այդ միշտ ժամը 9—11, ուրիշ բանի համար չ'էր բայց եթէ իւր մոտային աշխատութեանց հանգիստ տալու համար, քանզի հանգուց- եալը ի կենդանութեան, գիշերը ժամը 7էն սկսեալ մինչև ցերեկուան ժամը 9, գրելով կարգալով և մտաւոր կերպիւ չարաչար աշ- խատելով կ'անցնէր իւր ժամանակը. ասոր ոչ միայն մեք կը վկայեմք, այլ և իրեն մերձա- ւոր ծանօթներն:

Քաւ լիցի թէ այս ըսելով կ'ուզեմք հան- գուցեալը արդարացնել, զինքը նկատելով յանցաւոր իւր սրճարան երթալուն համար: Երբէ՛ք...:

Եւ նոյն իսկ բոլորովին հակառակ եմք Հո—Հոյն այն գաղափարին, որ տեսնուեցաւ իւր այդ նշանաւոր յօդուածին մէջ, որով կերպով մը կը մեղադրէր զգաղափարս՝ սրճա- րաններու մէջ անոնց ժամանակ անցնելուն համար, զայս անպատուութիւն համարելով ուսուցչութեան:

Երկարօրէն չը պիտի ջանամք այդ գաղա- փարին տարօրինակութիւնը և միանգամայն անկարեւորութիւնն հաստատել, այլ միայն այնպէս գիտեմք թէ — և կարծեմք մեզի պէս շատեր ալ — որ եթէ ուսուցչութեան պատիւ չը բերող ընթացքներու մէջ մեղադրելի և ան- պատիւ ընթացք մ'ալ կայ, այն ոչ թէ յետ արձակուրդի սրճարանաց մէջ նստիլ քալիլու, անա և թուղթ խաղալն է վարժապետաց, այլ անոնց՝ քաղաքը չը տեսնող մայրքոյ նա- ւաստներու պէս, ձեռքերնին ետեւին կա- պած, գլխարկնին դէպի ետև նետած, բալ- քօներնուն կամ հակէդներնուն կոճակները քալած, աչերնին կապոյտ երկնքին կամ ըն- նակարանաց տանիքներուն կամ պատուհա- նաց քիւրերուն յառած, բնակչաց և անցոր- դաց ուղադրութիւնը գրաւելու չափ քա՛հ, քա՛հ, հա՛, հա՛, հի՛, հի՛, խնդալով, « Մեք կանցնիմք կոր, կը տեսնեմք կոր » ի իմաստ ու- նեցող բարձրաձայն խօսելով, առ ի զուար- ճանալ՝ իրենց ձեռքի գաւազանը՝ քար նետե- լու մրցման ելնող տղայոց պէս՝ առգին ան- դին նետելով և գինովի նման իրենց քայլե- րուն ուղղութիւնը կորսնցուցած՝ դեղեկելով փողոցներէ անցնելն է...:

Ով որ ալ լինի Հո—Հոն, ուսուցիչ(2) կամ գրող, արհեստաւոր կամ վաճառական, եր- բէք չը պիտի ներեն իրեն հանգուցեալ Տիւր- կերեան էֆէնտիի բարեկամք և ճշմարտու- թեան սիրողը՝ իւր այդ ձախաւել յօդուածին համար. եթէ ըստ իրեն ասութեան՝ « exen- trique յօդուած մը գրել կ'ուզէր ուղադրու- թիւն գրաւելու համար », պէտք չ'էր որ

(1) Հանգստեան ժամերու մէջ գնդախաղ — որ զբո- րազգաբար քիչ կը գտնուի Պոլսոյ սրճարանաց մէջ — և ուրիշ ասոր նման մարմնամարզիչ զբօսանաց հետեւե- լը ոչ միայն հաճելի, այլ օգտակար է: Իսկ գալով ճար- արակին (սաւա, սանքրանի), զոր կ'արհամարհէ մեր Հո- Հոն, Ռուսոյի պէս մեծ մարդու մը ընտրած խաղն էր... Աւելի լաւ չ'են այս անմեղ զբօսանք քան թափառելի բերդի և Ղալաթիոյ փողոցները... պանդխտաց կեան- քը ուսումնասիրելու համար:

(2) Ազգին դժբաղդութիւնէն, ուսուցիչ մ'է և հայերէն լեզուի ուսուցիչ:

Տիւրկերեան էֆէնտիի նման պարկեշտ(1), հը- մուտ և ազգին երախտագիտութիւնն իւր վրայ ունեցող յարգելի անձնաւորութեան մը « Դաճաղին առթիւ » և զինքը հիմ առնելով իւր գաղափարաց այդ թուղթն մրտէր:

Պ. Հո—Հո օրաթերթի մը մէջ ունեցած իւր ազատ մուտքը պէտք չ'է չարաչար գոր- ծածել՝ չը գիտցած և չուսումնասիրած մար- դոց և իրաց վրայ առ հասարակ մի և նոյն ձե- ւով, մի և նոյն ոգւով գրելով:

Այս մասին զինքը այնքան չեմք մեղադ- րեր, որքան զինքը քաջալերող և ընդունող օրաթերթին, որ, չը գիտես ուսկից ալ կը գտնէ այս տեսակ անմարսելի անհատներ, զորս կ'ուզէ Բասթիլի պէս կլկեցնել ժողովրդե- րան՝ մին իրր հրապարակագիր, միւսն՝ չը գիտեմք ինչ...:

Այլ այսու հանգեմք Պ. Հո—Հո իւր օ- գուտն ալ ունի. իւր այդ տեսակ յօդուած- ներով մեզ փնտռել կուտայ միշտ այն յօդ- ուածները, զորս գրողք, չը գիտեմք ինչ պատ- ճառաւ, հրապարակէն քաշուած են բաւական ատենէ ի վեր, կարծեմք թէ այս ալ բան մ'է՝ արժանի օգուտներու կարգը դասուելու...:

Ն. Բ.

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Դ Բ Ա Ռ Տ Կ Ո Ր Ո Ւ Ս Ե Ա Լ

Միլտոնի սոյն աշխարհահռչակ և վսեմ գոր- ծին վրայ ընթերցողաց համառօտ գաղափար մը տալ փորձելով, նմանիմ գուցէ այն Յու- նաստանցիին որուն համար կը պատմուի թէ քաղաքին հրապարակին մէջ կը շրջէր՝ ձեռքը ունենալով աղիւսի կոտոր մը իրր. նմոյշ իւր ծախու տանն: Յուսամ սակայն որ դրախտ կո- րուսեալի նկատմամբ ասա յայտնուած մի քա- նի անկատար ու թերի գիտողութիւնը ա- ռիթ տան բանասէր ընթերցողին նոր և մաս- նաւոր ուղադրութեամբ ընթեռնուլ աշխար- հի գրականութեան այդ հրաշակերտն, որուն Հայերէն ընտիր թարգմանութիւնն ևս կա- տարուած է արժանաւորապէս:

Միլտոն եթէ տարի (1658-1665) անընդհատ աշխատեցաւ Դրախտ կորուսեալի շարադրու- թեանը համար: Աւելի քան հաւանական է սակայն ենթադրել թէ կրկնապատիկ ժամա- նակամիջոցի մէջ բանաստեղծին ուղեղին մէջ կը ձեռնէր սոյն նշանաւոր երկի յատկագի- ծըն: Աճապարանօք կամ անխորհրդաբար ընտ- րուած չէր նիւթն. և արդարեւ ոչ ուրեք կա- րելի էր գտնել նիւթ մը, որ ունենար աւե- լի ճոխ հարստութիւն՝ հանճարի մը համար և աւելի տխուր շահեկանութիւն՝ մարդկու- թեան համար: Ինչեւորդ գրքին սկիզբն հե- ղինակն ինքն կըսէ մեզ թէ երկար ատեն խորհած է նիւթին ընտրութեան համար և ուշ սկսած է գործադրութիւնն: Դրախտ կո- րուսեալ՝ երկար բանաստեղծութեանց յատուկ եղած սովորութեան մը համեմատ՝ իւրաքան- չիւր գրքի սկիզբն ունի « Նախագրութիւն » մը, որ երկու խօսքով կը պարզէ գրքին պա- րունակութիւնն և ընթացքն. այսպէս ուրե- մըն՝ առանց ամբողջ գիրքը կարդալու՝ մարդ կրնայ գրքին յատկագիծին վրայ տեսակ մը գաղափար կազմել, բայց ամբողջն կարդալով միայն կարելի է որոշ գաղափար մը կազմել բանաստեղծին հանճարոյն վրայ:

(1) Չը մոռնամք յիշել թէ Տիւրկերեան էֆ. 1876-78 թուականին Տնտեսական խորհրդոյ անդամակից եղած է:

Այրող լինեն—անկեալ հոգւոց խորհուրդն—
փրկագործութեան որոշումն—Սատանայի յաշ-
խարհ այցելութիւնն—Եդեմն և իւր ազնուարա-
րոյ բնակիչք—Իրենց մաքուր և երջանիկ կեան-
քըն—Ռափայէլի այցելութիւնն և նկարագրու-
թիւնն հրեշտակաց պատերազմին և աշխարհի
ստեղծագործութեան—Ագամի արթննալու
պատմութիւնն և առաջին անգամ սիրուն Ե-
ւայի հանգիստը—Փորձութիւնն և անկումն—
Սատանայի յաղթական դժուր վերադարձն—
Որդւոյն բարեխօսութիւնն—Միքայէլի առա-
քելութիւնն՝ դուրս վնասելու համար մեղա-
պարտ զոյգն—Ապագային երազի մէջ Ագամի
յայտնութիւնն—և մեր նախածնողաց տխուր մեկ-
նումն երջանիկ պարտէզէն՝ արդ պաշտպա-
նուած Յսուսի սրովն,—Այսպիսիք են ամե-
նանշանաւոր կէտերն՝ որք արտայայտուած
են Դրալիս Կորնուեայի տառն և երկու գրքե-
րու վեմ տողերու մէջ։

Տեղ տեղ և մասնաւորաբար մի քանի գրք-
քերու առաջին տողերու մէջ կը գտնեմք կա-
րեւոր ակնարկութիւններ Միլտոնի կենաց նը-
կատմամբ։

Միլտոն կ'սկսի առաջին գիրքն քերթողաց
յատուկ առաջարկովն—Մուսայից օգնութիւ-
նըն կը հայցէ իւր ձեռնարկի համար։ Դրալիս
Կորնուեային առաջին տողերէն իսկ որոշապէս
կը տեսնուի թէ հեղինակն է բարեպաշտ և
Քրիստոնեայ քերթող մը, ուստի և գլխաւո-
րաբար «Հոգւոյն օժանդակութիւնն» անհը-
րածեշտ կը համարի։ «Մաքուր և ուղիղ սիրտ
փնտռող Հոգի» էն կը խնդրէ որ «կրթէ և լու-
սաւորէ զինքն»։ Հեղինակին Սրբ. Գրոց մա-
սին ունեցած հմտութիւնն կրնայ դարմանք
գլխաւորապէս ստուգած արտեմից—Չափազան-
ցութիւն պիտի չլինի արդարեւ ըսել թէ Միլ-
տոնի ճշմարիտ հաւատքն իւր աշխոյժ երեւա-
կայութեան հետ միացած միայն կարողացաւ
տալ մարդկութեան Դրալիս Կորնուեային։ Հե-
ղինակին աշխարհագրական, դիցարանական
և տատկագրական անսպառելի հմտութիւնն
արժանացած է մասնագիտաց սքանչացման։
Վտարանք և ուրիշ մեզ ընտանի անուններ
ևս անմահ քերթողին յիշողութեանը մէջ ի-
րենց տեղն ունեցած են։

Դրալիս Կորնուեայի ամէնէն յուզիչ որպէս
և հրապուրիչ տողերն կը գտնուին երրորդ
գրքի սկիզբն, ուր ծերունի բանաստեղծն
կ'ողջայ իւր կուրուքեան վրայ. տխուր այլ
համբերատար ուղերգութիւն մ'է այն և ո'չ
գանգատ. և կարծես կոյր բանաստեղծն կը
միտթարուի յիշելով նշանաւոր կոյրերու ա-
նուններն։ Քանի մը տող վերջը հեղինակն երկ-
նային լուսոյ ճառագայթումն կը խնդրէ, որ-
պէս զի կարենայ մտաքը աչքովն տեսնել և
պատմել ինչ որ մահկանացուաց անտեսանե-
լի է։

Հակաճառութեան և փաստարանութեան
հրաշակերտի մը համար բաւ է երթալ Դ.
Գրքին վերջի տողերուն, ուր հիւանալի կերպիւ
կը պատմուի Գարրիէլի և Սատանայի միջև
տեղի ունեցած խօսակցութիւնն տրամախո-
սութեան մը ձևով։

Սատանայի նկարագրութիւնն Միլտոնի
հանձարի ամէնէն վեմ արտադրութիւնն է
թերեւս։ Միլտոն մագական զօրութեամբ մը
մեզ կը ներկայացնէ թեւաւոր, կոլոսական,
հրաշեայ ձև մը որուն մեծութիւնն չեմք գի-
տեր, բայց կարելի է գուշակել ազօտ կերպիւ
բազմատեղով ամենամեծ առարկայից հետ։
Իւր սուղարն հեռադիտակով տեսնուած լուս-
նին կը նմանի և ամենէն մեծ նաւի մը կայմն

ոչինչ է նիգակին հետ բազմատմամբ։ Չեմք
գտնել ձևի որոշ ուրուագիծ կամ մեծու-
թեան որոշ չափեր։ Տարտամ անորոշութիւն
և կոլոսական մեծութիւն կ'աւելցնեն պատ-
կերին ահաւորութիւնն։ Եւ հոս կ'արժէ յի-
շել նշանաւոր գրագէտի մը՝ Հալլամի՝ սրա-
միտ գիտողութիւնն, Հալլամ՝ բազմատեղով
Տանգէի և Միլտոնի Սատանայներն՝ կը գիտէ
թէ Տանգէ չէր կրնար համարձակիլ տալ այն-
չափ փայլ անկեալ հրեշտակապետի մը, այն-
պիսի դարու մը մէջ յորում եղջիւրներ և պոչ
մը կը ներկայացնէին ուղղափառ գաւառներն։

Դրալիս Կորնուեայի Ագամի և Եւան Աս-
տուածաշնչի ճշմարտութեան վրայ հիմնեալ
բանաստեղծական երեւակայութեան գեղեցիկ
արարածներ են։ Միլտոնի Ագամի և Եւան ի-
րական պատկերներ են—ճշմարիտ մարդ և ճըշ-
մարիտ կին—ոչ թէ բանաստեղծական մտաւի-
պարք որք երբէք չեն իրականանար մարդ-
կային կենաց մէջ։ Եւ ո'րպիսի պատկերներ
Մեզքի և Մահուան, պատկերներ զորս ճշմա-
րիտ հանձար մը միայն կրնայ նկարել այսպէս։

Այս չափն բաւ պիտի համարեմք այժմ
Դրալիս Կորնուեայի մասին. յիշեմք սակայն
թէ Միլտոն բարեկամի մը թեւադրութեամբն
գրեց նաև Դրալիս վերագետն, որ սակայն
ամէն կերպիւ հեռի է հաւասարելէ իւր նա-
խորդին, թէ և ըսեմք անցողակի թէ այս իսկ
կարող է ինքնին երաշխաւորել բարձր տեղ մը
իւր հեղինակին։ Միլտոնի անունն ծանօթ է
սակայն Դրալիս Կորնուեայի հետ։

Դրալիս Կորնուեային առաջին անգամ հրա-
տարակուեցաւ 1667ին։ Միլտոն իւր այս եր-
կըն ծախեց հինգ ոսկւոյ. առաջին տպագրու-
թեան 1300 օրինակը ծախուելէ վերջ հինգ ոս-
կի ևս ստանալու պայմանաւ. նմանօրինակ
վճարում մ'ալ երկրորդ և երրորդ տպագրու-
թեանց համար։ Միլտոն մեռած էր երբ եր-
րորդ տպագրութիւնը կը հրատարակուէր
1678ին և իւր կինն բոլոր իրաւունքը կը վա-
ճաւէ ութ ոսկւոյ։ Այսպէս, Միլտոնի և իւր
ժառանգորդաց ընդամենն տասն և ութ ոս-
կի եկաւ ներկայ ժամանակաց այս ամէնէն
նշանաւոր բանաստեղծութեան համար։

Լոնտոն

Հ. Յ. Տ. Ս.

ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ

(Շար. Գալուստի քուէն)

13.

Վերոյիշեալ բարեխօսութիւնք և յիշատա-
կութիւնք բուն Պատարագի արարողութեան
մէջ միջնակեալ մաս մի կը կազմեն, որ նուի-
րագործութենէ՝ յետ կ'սկսի և կը շարունա-
կուի մինչեւ Ամենայն սրբովն. և այս կէտէն
Հայր մեքով մի նոր բաժանումն կ'սկսի, այն է
երկրպագութիւն Քրիստոսի որ այժմ Սեղա-
նի վերայ Սրբութեան մէջ կը բազմի։ Շատ
կարեւոր է այս մասն, որովհետեւ Քրիստոսի
Մարմնոյ և Արեան հաղորդ. լինելու համար
պէտք է հաւատանք թէ այդ Սրբութեան մէջ
ինքն ճշմարտապէս մարմնով ներկայ է. և ե-
թէ այդպէս է, ուրեմն պէտք է որ մեր այդ
հաւատոյ զգացումն գործնական կերպով եւս
ի հանգէս բերենք և իրրեւ Աստուած և Որ-
դի Աստուծոյ այդ Սրբութեան մէջ զնա պաշ-
տենք և երկրպագանեմք։ Հայր մեք այս միջո-
ցին երգելու պատճառն ոչ թէ լոկ նոր բաժան-
ման սկզբնաւորութեան համար է, այլ քան-

զի Առաքելոց ժամանակէն ի վեր Ս. Պատա-
րագի արարողութեանց անշարժ և էական
մասն էր այս Տէրունական Աղօթքն, որ կ'ար-
տասանուէր կամ կ'երգուէր ի մէջ սրբագոր-
ծութեան և հաղորդութեան. ասոր համար
ինչ յաւելումներ և փոփոխութիւններ որ ալ
կրած լինին զանազան ազգաց Պատարագամա-
տոյցք, այս մասն անշարժ և անփոփոխ մնա-
ցած է բոլոր ծիսից մէջ, թէ՛ արեւելեան եւ
թէ՛ արեւմտեան։ Հայր մեքն զինի՝ սարկա-
ւագի ծանուցմամբն «քահանայն խոնարհեա-
ցի և ամենայն ժողովուրդն չոքեսցի ի ծունկս»
յերկրպագութիւն Քրիստոսի, ինչպէս վերը
ասացինք։

Չեմք կարող չը յիշել թէ երկրպագու-
թեան և չոքելու մասին ալ ինչ զեղծումներ
մտած են մեր մէջ։ Չոքել կը նշանակէ գոնել,
ի գոնա անկանիլ, այսինքն ծնագաց վերայ լյ-
նալ եւ այնպէս կենալ, ոչ թէ ծաւալատիկ
գետինը կամ եթէ նստարան կայ նստարանի
վերայ հանգիստ նստիլ։ Շատեր չեն գիտեր
թէ նստելու ժամանակն երբ է և չոքելու
ժամանակն երբ. Գալիլէ համանիւ կը համա-
րին չոքելու հետ. ինչպէս Գիրք կարգալու
ժամանակ կը նստին, նոյնպէս ալ ամենէն
նուիրական երկրպագութեան ժամանակ
կը նստին։ Արդարեւ ժամանակի փոփո-
խութիւնները կը պահանջեն նաեւ փոփոխու-
թիւններ եկեղեցւոյ քանի քանի սովորու-
թեանց. ժամանակ կար երբ եկեղեցւոյ մէջ
աթոռոյ կամ ու է նստարանի վերայ նստիլը
իրրեւ մահացու մեղք կը նկատուէր ամէն քը-
րիստոնէի համար եպիսկոպոսէն զատ. բայց
այժմ շատ տեղեր եկեղեցին նստարաններով
լեցուցած են, իրրեւ ընական հետեւանք եւ-
րոպական կրթութեան և ազդեցութեան։ Այս
տեսակ փոփոխութեանց մէջ անպայման կեր-
պիւ հակառակելու չենք, բայց ոչ ալ թող-
նելու ենք որ թերահաւատ և կրօնքէ անձա-
շակ մարդիկ գործի գլուխ կայնին և ուզած-
նուն պէս «բարեփոխեն»։ Կրնանք յիշել քա-
նի քանի եկեղեցիք յորս նստարանները այն-
պէս քովէ քով խիտ առ խիտ դրուած են որ
ոչ թէ միայն երկրպագութեան համար տեղ
չի մնար, այլ և ոչ իսկ չոքելու կամ ծնագաց
վրայ գալու տեղ կայ։

Սարկաւագն Պապական Սրբապետի ժո-
ղովրդի ուշադրութիւնը կը դարձնէ քահա-
նայ շարժմանց որ այս միջոցին «առցէ զՍուրբ
Հայն ի ձեռն և բարձրացուցանէ ակներեւ ա-
մենայն ժողովրդեանն», որպէս զի նոքա ան-
կեալ երկրպագանեն Քրիստոսի որ այժմ հա-
ւատով տեսողաց յայտնի է։ Մի և նոյն ժա-
մանակ քահանայն կ'աղաղակէ «Ի Սրբութիւն
Սրբոց», որոյ յունարէնը նման է մեր հին Պա-
տարագամատոյցին որ է Սրբութիւն Սրբոց,
և կը նշանակէ թէ այս է Սրբութիւն որ մի-
այն Սուրբ մարդոց կը վայելէ, այսինքն
միայն անոնք կրնան արժանաւորութեամբ
ճաշակել որ իրենց սիրտերը ու խիղճերը մե-
ղաց աղտեղութենէ մաքրած են խոստովանու-
թեամբ և ապաշխարութեամբ։ Այսպէս եր-
կրպագութեան պաշտօնը կը շարունակուի
մասամբ քահանայի և մասամբ ժողովրդեան
օրհնարանութեամբ, և ի վերջոյ Սուրբ Հա-
ցըն կը թանայ սուրբ Բաժակին մէջ պատշա-
ճաւոր աղօթիւք, և դառնալով առ ժողովուր-
դըն՝ կը հրաւիրէ զնոսա որ մօտենան ի հա-
ղորդութիւն պատուական Մարմնոյ և արեան
Տեառն։ Վերստին դառնալով ի սեղան, Սուրբ
Հայն կը բեկանէ ըստ օրինակի Տեառն և նը-
շանակուած աղօթքներն կ'ասէ «և խնդրեսցէ»

ի ճշմարիտ Աստուծոյ զպէս պէս հայցուածս անձին իւրոյ և ժողովրդեան և աշխարհի, և թողութիւն խնդրեացէ իւրոյ յանցաւորացն, թշնամեացն և ատելեացն. և անդէն ահիւ և դողութեամբ ճաշակեացէ ի Մարմնոյն և արքայէ ի Բաժակէն: Միւս խրատն կ'ասէ. «Եւ Սարկաւազն հաղորդեցի» . խրատ մի որ շատ քիչ անգամ մեր ներկայ ժամանակի սարկաւազներէն ուշադրութեան կ'արժանանայ: Այս տեղ յիշուածն այն սարկաւազն է որ վերաբերումն կը կատարէ, քահանայի մօտ կը կենայ և անոր կ'օգնէ սրբազան արարողութեանց մէջ. և սրբութեանց այսքան մերձեանալուն համար կը պահանջուի որ նա եւս քահանայի պէս ինքզինքն պատրաստէ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ, և քանզի արարողութեան մէկ մասն ինքն կը կատարէ, պէտք է նա ևս հաղորդի: Նախկին որպէս և մեր ներկայ եկեղեցւոյ (այլ անգործադրելի մնացած) օրէնք է սա որ մինչեւ ցայժմ Յունաց մէջ խոստով կը պահուի, և ցաւալի է որ մինչ մենք յաճախ կը պարծինք մեր աւանդապահութեան վերայ, այս տեսակ և սակեաւելի մեծ զանցառութեանց և անտարբերութեանց մէջ կը գտնուինք: Նախկին եկեղեցւոյ մէջ մէկ ուրիշ բարի սովորութիւն ալ կար որ հիմա գրեթէ բոլորովին մոռցուած է, և ոչ Հայք կը պահեն ոչ Յոյք: Տեսանք ի վերոյ թէ ինչպէս անարժանք և ճաշակուելու անպատրաստ անձինք սրբադոճութենէն յառաջ եկեղեցիէն կ'արտաքսուէին, յորմէ կը հետեւի թէ եկեղեցւոյ մէջ գտնուած մնացեալ հաւատացեալք ամենեքին «կարող են հաղորդել» աստուածային խորհրդոյն: Ըստ այսմ ի նախկին դարս եկեղեցւոյ մէջ գտնուած բոլոր հաւատացեալք՝ ամենէն բարձրաստիճան կղերականէն սկսեալ մինչեւ ամենէն աննշան քրիստոնեայն՝ կը հաղորդուէին ամէն Պատարագի ժամանակ: Սորա պատճառն ալ այն է ինչ որ սկիզբն ըսինք, թէ Պատարագն երկու գլխաւոր նպատակ ունի, երկրպագութիւն և հաղորդութիւն. և ամէն քրիստոնեայ (ինչ որ ալ լինի նորա աստիճանը կամ վիճակն) պարտական է այս երկու կերպովն ալ մասնակցել Ս. Պատարագին, եթէ անկէ օգուտ քաղելու յոյս և վստիք ունի. երկրպագութիւնն առանց հաղորդութեան կատարեալ չէ, որպէս և հաղորդութիւնն ալ առանց երկրպագութեան թերի է, հարկաւ հանդերձ բացառութեան ստիպողական պարագայից:

(Շարունակելի)

ԹՈՐՈՍ Տ. Ի. ԶՈՒՂԱՅՆՑԻ
Վարժապետ Աստուածաբանութեան

ՃԱՆ ԳՈՒՐԹԱՐԱՆ

Թրքերէն Սրնաք լրագրոյ Խմբագիր Մեծ. Տոբթէօր Իւթիւճեան է փէնտիւ աշխատասիրեալ բժշկական հրահանգ մ'է որ կենաց վանազան դժբաղդ պատահարներու միջոցին ի դորձ գրուելիք անմիջական դարմանները ցոյց կուտայ միակ'ցուցակի մը մէջ: Այս պատահարք են. Այրմունք թունաւորմունք, կատաղի կենդանեաց խածուածք, մարիլ, խեղդուիլ, ոսկերաց բեկումն ու խախտումն, կոճակ' ոսկոր' ասեղ' և այլն կլնել, արիւնահոսութիւնք, արիւնաթքութիւն, ձմրունք, խորշակահարութիւն, կաթուածք, ստեղծանք, փողոցաւք, ևս շատ Գին 2 դրուչ:

Ճան գոյրբարան «Մըհաթ»-էն արտատպեալ է և թարգմանութեամբ հրատարակեալ է հայերէն, աստիճան, արարելի, պարսկերէն, յունարէն, հրէյերէն, գաղղիարէն, անգղիերէն, ռուսերէն և ուսմաներէն լեզուներով:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԾԱՂԿՈՑԻ ԴԱՍԵՐ

ԳՆՏԱԿ

Բ.

Այս առաջին խօսակցութիւնն որ պարզութեամբ սկսաւ, մեծ քայլ մ'ընել տուած էր դէպ յառաջագրեալ նպատակն:

1. Տղան օգուտ քաղած էր դասին առարկայէն (մատուցութիւն):

2. Նորա բառարանը ճոխացած էր այն բառերով զորս ուսած էր նա և որք նորա ստացած մէկ գաղափարին հետ սերտ առնչութիւն ունէին. (խմացողութիւն, մայրենի լեզու):

3. Իւր կարծիքը տուած էր կենաց սովորական իրողութեանց վերայ, իրողութիւնք որք ամէն օր կը պատահին իւր շուրջ: (Դասողութիւն):

Յաջորդ դասին, վարժուհին խորհեցաւ իւր աշակերտաց յիշողութիւնը մարդել:

— Պզտիկ տղաքներս, ըսաւ նա, դասն լիւրջով, ի՞նչ ըրինք երէկ, — ի՞նչ ըրինք այս առաւօտ:

Եւ այս օրէն սկսեալ, վարժուհին դասն այս հարցմամբ կ'սկսէր միշտ որով տղաք կը սովորէին համարագէտ լինել իւրեանց գործառնութեանց վերայ:

Միշտ ուրիշ եղբեր գործածելով, համառօտիւ երկրորդել կուտար ինչ որ նախորդ աւուր մէջ ըրած էին, և մեծ հոգ կը տանէր որ պատասխանները լաւ ձևակերպուած լինէին:

Երբ այս նախապատրաստութիւնը վերջացաւ, վարժուհին շարունակեց դասը՝ հարցական եղանակին հետեւելով միշտ:

— Ո՞ր են գնտակներս:

ՆՈՒԱՐԴ. — Տուիին մէջ են:

— Այդպէ՞ս կը պատասխանեն. — Երէկ ես ի՞նչ պատուիրեցի Ձեզ. — Որո՞նք միտքն է:

— Տիկին, կ'ըսէ Նուարդ, գնտակները տուիին մէջն են:

— Ո՞ր է տուիլը:

ՆՈՒԱՐԴ. — Տիկին, տուիլը գրասեղանին վրայ է:

ՈՒՄՈՒՑՁՈՒՀԻՆ, առանց բացալու. — Գնտակներս ամէնն ալ մի և նոյն գոյնն ունին:

— Ո՞չ, Տիկին:

— Ձեզնէ՞ ո՞վ գնտակներէս մէկուն կամ միւսին գոյնը միտքը պահած է:

Այս տարիքն ունեցող տղոց սահմանեալ ուսուցումը պէտք չէ որ շատ տարրական լինի:

— Կուզէ՞ք տեսնել զանոնք. — Գիտցէ՞ք նայիմ, ի՞նչ գոյն ունի ձեռքերնս:

Շատ մը տղաք տարբեր տարբեր պատասխաններ կուտան:

— Ահա գնտակը:

— Կարմիր է:

— Հապա ա՞յս. — Հապա ա՞յն. — Եւն. — Քանի՞ հատ են: — Ձէք գիտե՞ր. — Քանի հատ ըլլալը գիտնալու համար ի՞նչ ընելու է: — Պէտք է համրել զանոնք. — Եկո՛ւ, Աշխէն, համրէ՛ր գնտակները. — Ամէն թիւերն ալ մատերովդ ցոյց տուր. — Ամէն մեկտեղ համրեմք գնտակները. — Մէկ գնտակ, էվէլ մէկ գնտակ, կ'ընէ երկու գնտակ, և այլն:

Ապա շարունակեց. — Գնտակներն ամէնն ալ մէկ գոյն ունին. — Ո՞չ, ո՞չ. — Դու,

Արշամ, այս գոյնին անունն ըսէ: Դու ալ, Հայկակ, սա գոյնինն ըսէ, և այլն:

— Ամէնս մէկտեղ ըսենք անոնց անունը՝ առանց երգելու:

Այս հրահանգը զուարթօրէն վերսկսաւ, և ա՛յն ատեն դադարեցաւ երբ՝ իւրաքանչիւր աշակերտի առանձինն առանձինն հարցունելով՝ հաստատուեցաւ թէ սոքա կրնային կատարելապէս իրարմէ որոշել գոյները: Վարժուհին կը խոստանար նաև դարձեալ կրկնել մի և նոյն հրահանգը. վասն զի ամէն աշակերտ առաջին դասէ մը ետք չէ կարող ճանաչել գոյները:

Անոնցմէ շատեր՝ կարգ մը հրահանգներէ ետք միայն կարող են ստանալ այս ծանօթութիւնը: Այսպիսեաց մասնաւոր հոգածութիւն նուիրել հարկ է:

Նա՛ որ յառաջ կը վարէ միայն ուշիմ ու դիւրամիտեակ մտքերն ի վնաս նուազ արթուն և աւելի բիրտ իմացականութեանց, պարտադրուծ է նա իւր պաշտօնին:

Առարկայից ձեւն ու գոյնը բացարձակապէս իրարմէ անկախ բաներ են. և սակայն տղան, որ միշտ լաւ չհասկնար իւր գործածած ասացուածոց բուն արժէքը, հակամիտութիւն մ'ունի զանոնք չիթթելու իւր լեզուին մէջ:

Երբ վարժուհին հարցուց թէ ի՞նչ ձև ունէր իւր գնտակը, շատ տղաք պատասխանեցին.

— Կարմիր է:

— Ո՛չ, յարեց վարժուհին, իրո՞ւ գնտակն գոյնը կարմիր է, բայց ձեւ կըր է:

Եւ երկու անգամ կրկնեց այս խօսքը՝ չեղտելով այն մէն մի բառերուն վերայ որոց իմաստը լաւ տպւորել կ'ուզէր իւր ունկնդրաց մօտը մէջ:

Ապա անմտադիր տղու մը ուղղելով. — Պերճ, ըսաւ նա, գնտակս ի՞նչ գոյն ունի. — Ի՞նչ ձև ունի:

Պերճ որ կը խաղար, չկրցաւ պատասխանել:

Վարժուհին այս պարագայէն օգուտ քաղեց բարձրաճայն ընելու սա դիտողութիւնը թէ այն տղաք որ դասի ատեն կը խաղան, երէք բան չեն սովորիր:

Յայնժամ, հակառակը ցոյց տալու համար անշուշտ, հարցումներ ըրաւ ամենէ մտադիրներէ միայն որ իրարու ետեւ յաջորդութեամբ պատասխանեց եղած հարցմանց:

— Նուարդը, ըսաւ նա քաղցրութեամբ, մտիկ կ'ընէ, խօսելէ առաջ կը մտածէ:

Ամէն տղայ մտիկ կ'ընէր:

Ուսուցչուհին օգտելով այս վաղանցիկ վայրկեանէն, վայրկեան յորում տղաք իւրեանց նոր ընդունած մէկ տպւորութեան տակ կը գտնուէին, անմիջապէս դատաւոր ընարեց զանոնք:

— Աղէ՛կ բան է, հարցուց նա, Նուարդին պէս մտադիր ըլլալ: (Դասողութիւն):

— Աղէ՛կ բան է Պերճին պէս անմտադիր ըլլալ: (Դասողութիւն):

Ուսուցչուհին կանգ առաւ հոս. երկու տղոց դիմադրութիւնքը շատ լաւ կը բացատրէին այս հարցմանց պատասխանները:

— Նուարդ, շարունակեց նա, գնտակին վրայօք քանի՞ բան ըսինք: (Յիշողութիւն, բուռն մն):

Այս անգամ Նուարդ չէր գիտեր. պէտք էր օգնել նմա. նորա աչքեր կը վիայէին բաւական թէ կարօտ էր օգնութեան:

— Տեսնե՛նք, Նուարդ, թէ ամենէ առաջ

ի՞նչ ըսինք: Ըսինք թէ ցուցուցած առարկան էր — գնտակ մը: Երկրորդ, ըսինք թէ ան ունէր — կըլու ձե մը: Ասով երկու բան ըսած կ'ըլլանք:

Եւ որովհետեւ պէտք է միշտ ամբողջ դասարանն առ ինքն ձգելու միջոցներ նախընտրութեամբ գործածել, — Ամէնդ մէկտեղ, ըսաւ նա, ձեր մատներով ցոյց տուէ՛ք երկու թիւը:

— Հիմա, ըսէ՛ք ինձ, գնտակս ինչէ՞ չի նուած է:

Նուարդ, Պերճ, Աշխէն, Հայկակ, Լեն, չէ՞ք գիտեր: Եկէ՛ք ձեր ձեռներով շօշափեցէ՛ք գընտակս:

— Բուրդէ է, ըսաւ տղաքներէն մէկը:

— Այո՛, բրդէ է գնտակս: — ահա՛ առսով երեք բան ըսինք գնտակին վրայ: — Ամէնդ մէկտեղ, երեք մատ ցոյց տուէ՛ք տեսնեմ:

Այս երեք բաները մէյ մ'ալ կրկնենք՝ մատերնուս վրայ զանոնք համբելով:

— Տեսնե՛ք որ գնտակն երեք յաւկուրիւն ունէր: Երեքն ալ իրարմէ տարբեր: Բայց, աւելցուց նա, գնտակն ուրիշ ՅԱՏԿԱԹԻՆՆԵՐ ալ ունի տակաւին: — Եթէ խելօք կըրնաք, անոնք ալ կը սովորեցունեմ ձեզ:

Վարժուհին տեսնելով որ ըսածները հասկըցուեցան, նոր բառ մը ու նոր դադափար մը դրաւ ի փորձ:

— Ամէնդ ալ լաւ մտիկ ըրէ՛ք ինձ: Վաղարշ, գնտակն ի՞նչ է: Ա՞նձ մ'է թի իր մը: Վաղարշ ապա՛ծ մնացեր էր: Այս հարցումն իրեն հասկցունելու համար, պէտք էր շատ աւելի պարզ կարգ մը հարցումներ ձեռք առնուի:

— Դո՛ւ, Վաղարշ, ի՞նչ ես գու: — Դըն-սա՛կ մ'ես (ծիծաղք): — Ոչ, Տիկին, ըսաւ Վաղարշ, պղտիկ մանչ մ'եմ ես: — Հապա Նոյեմբարձ: — Հապա ե՞ս: — Տիկին մը: — Եւ դո՛ւ, Նոյեմբարձն, ե՞ս: Ի՞նչ ենք մենք ամէնքս: — Ահա նորէն չփոթեցար: — Մենք անձեր ենք: — Մեզմէ ամէն մէկը զատ, յասուկ անուն մ'ունի: — Գնտակն ալ անուն մ'ունի: Բայց այնպիսի անուն մ'է այն, որ ուրիշ ամէն գնտակներու հասարակ է: — Գնտակն ա՞նձ մ'է: — Ո՛չ, ո՛չ: — Անձ չէ: Հապա ի՞նչ է...: Ձայն չէ՛ք հաներ: Հիմա պիտի ըսեմ ձեզ թէ գնտակն ի՞նչ է: Աղէկ մտիկ ըրէ՛ք:

Գնտակը ի՞ր մը, առարկայ մ'է:

Այն ատեն վերստին սկսան մատներով համբել այն յատկութիւնները որոցմով որ գնտակն որակուած էր:

— Բանի՞ յատկութիւն համբելինք, հարցուց վարժուհին:

— Չորս, Տիկին, ըսաւ ամենէ բազմահմուտներէն մին: — Շատ լաւ, բարեկամս, — բարձր ձայնով նորէն ըսէ գոնոնք, որպէս զի միւս ընկերներդ ալ քեզնէ ետքը կրկնեն և աղէկ մը հասկնան:

Առ նուազն քսանի չափ տղոց զատ զատ հարցուեցաւ տարբեր կերպերով: Միւսները խմբովին պատասխանեցին: Առաջին դասի մը համար այսչափը կը բաւէր:

Հետեւեալ աւուրց մէջ, վարժուհին միեւնոյն կերպով վարեց իւր դասեր:

Ինչ որ տակաւին չէր ուսուցումը՝ կանոնաւոր փոքր մասերու բաժնուած՝ յաջորդ խօսակցութեանց նիւթ եղան:

Առաջուց տրուած ծանօթութիւնները կրկնուեցան, միշտ փոքր բան մ'աւելցունելով անոնց վրայ: — զոր օրինակ:

Գնտակը կակուղ է: — Սեղանը կարծէ է: Վարժուհին դասարանին մէջ փնտռել տը-ւաւ ինչ որ կակուղ է, ինչ որ կարծէ է, — ինչ որ կըլու է:

Տղաքները զիրենք շատ երջանիկ կ'զգան այս փոքրիկ գիւտերն ընելով, զորս խելացի վարժուհի մը դիւրաւ կրնայ նշմարել տալ նոցա:

Արդարեւ, գնտակին կըլու կամ կակուղ, Լեն, լինելը սովորին չահաւոր բան մը չլինիր տը-ղուն համար, եթէ միեւնոյն ատեն ունակու-թիւն չ'ստանայ ի կիր արկանել այս պարզ գիտելիքներն, և այսու ստացած ծանօթու-թեանց չ'ջանակն ընդլայնել:

Դասին բնարանը փոխելու համար, օր մը վարժուհին միտքը դրաւ իւր սանիկներուն հարցնել թէ գնտակը խելօք է:

Այս հարցումը բնականաբար տղոց ծիծաղը գրգռեց, որք շատ լաւ հասկցան թէ գընտակը բարոյական յատկութիւններ չէր կարող ունենալ:

Այլ վարժուհին՝ առանց իւր միտքը դրած նպատակէն չեղելու՝ անմիջապէս հարցուց:

— Գնտակը ձեզ պէս ունի՞ աչքեր որք կը խոնարհին երբ չարութիւն կ'ընէք: — Ո՛չ, անտարակոյս: Գնտակը չ'ապրիր: — Ի՞ր մ'է ան: — ապրող էակ մը չէ ան:

Եւ որովհետեւ միշտ մտադիր էին, Գնտակը, ըսաւ նա, չունի խիղճ՝ ձեզ և ինձ պէս:

Իւր բարոյական, խորհրդածութիւնները շատ հեռուն չտարաւ: Առաջին անգամին համար այսչափը կը բաւէր: Այս մատաղ հոգեւոց խորը ձգած էր արդէն մի բողբոջ որ կըրնար բեղմնաւորիլ ապագայ աւուրց մէջ:

Վաշնգաւոր եղած կը լինէր, եթէ դասը վերջանող այս լուրջ գաղափարը գար ի տարածումը՝ ուսուցման առարկայն կազմող ծանօթութեանց հետ խառնուէր այս մատաղ գլուխներու մէջ, և չփոթ ու յուզում յարուցանէր ի նոսա:

Ուրիշ օր մը, ուսուցչուհին՝ տղոց մտադրութիւնը չ'սպառելու համար, սկսաւ գնտակին հետ խաղալ:

Գնտակը լարէն բռնեց առկալս: — Ի՞նչ կ'ընէ գնտակը: — վեր կ'ելնէ: — Հապա հիմա՞, — վար կ'իջնէ:

Մէն մի շարժման հարցում մը կ'ընէր, որոյ ի հարկէ կը պատասխանէին տղաք:

— Աւելի շուտ վեր կ'ելնէ, — Աւելի կամաց, — Գնտակը քովս է: — Ինձմէ հեռի է — Ժամացուցի ձօճանակին կը նմանի:

— Լարէ մը կախուած է: — Լարին ուղղութիւնն ուղղա՞ծ է:

— Լարը երկայն է, ուղիղ է և կըլու:

— Ձեռքովս բռնած եմ լարը: — Եթէ թող տամ զայն, գնտակն ուղղա՞ծ կ'երթով առջնէ ելած առաջին արգելքին վրայ կ'իյնայ անմիջապէս:

— Գնտակը յողնած է: — Կը հանգչի: — Սեղանին վրայ է, — Սեղանէն անդին է, — Սեղանէն աւելի է, Լեն:

— Նուարդին գլխուն վրան է: — Իմի-նիս, իմինիս վրայ ալ թող գայ, աղաղակեցին շատ մը պզտիկ տղաք:

Վարժուհին ամենամեծ փութով տղոց այս փափաքին զիջաւ: շուտ մ'ընտրեց խելօք տը-ղաքը, զորս կը վարձատրէր այնպէս ինչպէս որ ուզած էին և ջանաց միւսներուն ալ լաւ մը հասկցնել թէ խելօք տղաք միշտ կը վարձատրուին այսպէս:

Եւ սակայն վարժուհին խիստ անկողմնակալ էր այս վարձատրութեանց մէջ: Տղաք սը-

րամիտ են: Նոքա արդարութեան զգացումն ունին ընդարդոյս զոր վիրաւորելէ շատ զգուշանալ պէտք է:

Հրահանգը շարունակուեցաւ:

Գնտակը՝ ուղիղ գծի համեմատ շարժելէ ետք, եղանակաձեւ շարժումներ ևս կը կատարէ:

— Գնտակն ինքն իր վրայ կը դառնայ:

— Գնտակը՝ գաւազանի մը շուրջն օձաձև կը դառնայ:

— Շրջանակ մը կը կազմէ ձախ կողմը:

— Շատ մը շրջանակ կը կազմէ աջ կողմը:

Սեղանին վրայ կը գլորի: — Կանգ կ'առնու: Ապա երկու շարժում մէկտեղ կը կատարէ: — Ինքն իր վրայ և սեղանին բոլորտիքը կը գլորի: — Աւելի շուտ կը գլորի: — Աւելի կամաց: — Ինքն իր վրայ և կեդրոնի մը բոլորտիքը կը դառնայ, Լեն:

Այս հրահանգաց մէջ՝ կարեւոր կէտը ամէն օր նորանոր շարժումներ երեւակայելն է (1):

Երբ տղաք այս ծանօթութիւնները լաւ մ'ըմբռնեցին, նոցա իւրաքանչիւրին՝ իր ի վարձ, մի գնտակ տրուեցաւ:

Յայնժամ նոքա ինքնին անձամբ կը կատարէին այն շարժումները զորս վարժուհին կը հրամայէր:

Ապա վարժուհին սովորեցուց նոցա գնտակի երգին խօսքերն ու եղանակը:

Երկար գործ մ'եղաւ այս: Տղաք վերջապէս խմբովին կրկնեցին զայն, որոշեալ ելէջները կատարելով ի չափ և ի շարժումով:

Շատ օրեր, շատ շաբաթներ անընդհատ աշխատութիւն կրելէ ետք, խաղը վերջապէս կազմակերպեցաւ և զարմանագեղ տեսարան մ'ընծայեց դիտող աչաց:

Ահա թէ ինչ միջոց ի գործ կ'ածէր ուսուցչուհին՝ գնտակները տղոց բաժնելու համար: Իւրաքանչիւր ազգաբարի (աշակերտ-ուսուցիչ) կուտար այնչափ գնտակ որչափ որ աշակերտ կար անոր նստարանին վերայ: Վարժուհին նշանը տար թէ չէ՝ կատարեալ կարգապահութեամբ ձեռքէ ձեռք կ'անցնէին գնտակները և միահողոյն կ'երգէին:

«Գնտակը գայ, հապո՛ւս արի՛ք,

«Ձեռնէ ձեռք տանք յուշիկ յուշիկ:»

Յայնժամ իւրաքանչիւր տղայ իւր դէմը, գրասեղանին ձիւղ եզերքը կը դնէր գնտակը որոյ լարն առկալս ձգուած էր: Այս ամէն պզտիկ գնտակները մէկ կարգի վրայ դրուած էին իրարմէ հաւասար հեռաւորութեամբ: Խիստ հսկողութիւն կը լինէր այս բանին: Այս կարգն ու այս զուգաշարժութիւնն անվերջ կ'երպով կ'ազդէին միշտ ունկնդրաց մը տացը վերայ:

Այս խաղը կը սահանջէ խորին լռութիւն, և որպէս զի հնարաւոր լինի խաղին գործադրութիւնը, պէտք է որ տղաք շուտաւոյթ հնազանդին տրուած հրամանաց: այլ խղճա-միտ ուսուցչուհի մը կրնայ արդէն այս խաղը, իր բնտիր միջոց մը, ի գործ ածել՝ իւր դասարանին մէջ կարգն ու կանոնը պահելու:

Իր վերջաբան՝ պիտի ըսեմ թէ գնտակին նիւթն որոշելէ յետոյ կարելի է նաև հետեւեալ հարցումներն ընել տղոց:

— Բուրդն ուրկէ՞ յառաջ կուգայ: — Բը-նութեան ո՞ր ցեղին կը վերաբերի բուրդը: — Բուրդը ոչխարաց վրայ մի և նոյն գոյնն ունի:

— Ի՞նչ է ոչխար մը:

Ոչխարները բարի օրինակ մ'են տղոց: Ա-

(1) Աւելի զարգացեալ տղոց կարելի է նոյն իսկ տն-շարժութեան վրայ խօսիլ: « Ինչո՞ւ համար կը շարժի գնտակը: Ինչո՞ւ համար կանգ կ'առնու: »

նոնք կակուղ ու դալար խոտն ուտելու համար երբեք չեն կուտիր իրարու հետ։ Առանց զիրար հրելու և հրմըշտելու իրարու տեղ կուտան։ Անմիջապէս իրենց մօր հրամանին կը հնազանդին։ Մարգագետինն մէջ՝ այնչափ ոչխարաց միջև կը ճանչնան զայն։

Այս առթիւ, ուսուցչուհին խօսակցութեան ուրիշ նիւթեր ևս կը գտնէ։

— Ոչխարը մատ չունի։ Անոր թաթերն եղջիւրով չըջապատուած են։ Թաթեր ունի նա և ոչ թէ ճիրաններ, ևլն։

Յայնժամ առաջարկելու է աղոյ որ անուանեն մի քանի կենդանիներ որոց թաթերը չըջապատուած լինին եղջիւրով։

Տղաք իրենք իրենց պարտին փնտել այդ կենդանիները։

Յորդորէ զանոնք որ փողոցին մէջ դիտեն ձիերը, էշերը, կովերը և այն ամէն կենդանիները որք կ'անցնին անկէ։ Ապա դիտել տուր անոնց թէ ինչ տարբերութիւն կայ ոչխարին ու ձիուն թաթերուն միջև։

— Ոչխարին և որոճողաց թաթերն ընդհանրապէս հերձուած են։ Ձիուն, իշուն, ևն, թաթերը մէկ կտորէ կը բաղկանան միայն։ Այս կենդանիք խոս, բոյս կ'ուտեն։ Այն ամէն կենդանիներն որք խոտեղէնով կը սընանին, բերան ունին և ոչ թէ երախ։

Դիւրին է հասկնալ թէ այս ծանօթութիւններն որք պարզ են այսչափ, չունին ուրիշ կարեւորութիւն, այլ միայն նպատակ տրուող մտադրութիւնը գրաւելու, և՛ այսու պատրաստելու զանոնք՝ կերպով մը իրենք իրենց գտնելու ինչ որ վերջը պիտի ուսուցուի նոցա։

Թարգմ. Ս Ե Պ Ո Ւ Հ

Ն Ե Ր Ք Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Պատգամաբաշխութիւնք. — Կիւմիւշխանէի կէլքիթ գաւառակին գայմազամ անուանեցաւ Ահմէտ Բէլիտ պէյ, գայմազամ Շիրանի։ Շիրան գաւառակին գայմազամ անուանեցաւ Իսրահիմ Լուծֆի Էֆէնտի, գայմազամ կէլքիթի։ Ատանայի Ֆէքէ գաւառակին գայմազամ անուանեցաւ Ալի Էֆէնտի, գայմազամ կազէի։ Նոյն նահանգին կազէ գաւառակին գայմազամ անուանեցաւ Ապտիւլլանի Էֆէնտի, որ այլ և այլ տեղեր գայմազամութեան պաշտօն վարած է։ Մարաշ գաւառին մարգահամարի պաշտօնեայ անուանեցաւ Օսման Էֆէնտի և մարգահամարի քարտուղար անուանեցաւ Միւսթաֆա Էֆէնտի։

Ասիւնաք և Պատնաք. — Սանիյէի Բ. աստիճան տրուեցաւ Սուրիոյ նահանգին Իտարէի ժողովոյ Ա. քարտուղար Սայիտ պէյի։ Սանիյէի Բ. աստիճան՝ Այալնի գաւառին թղթապետութեան տնօրէն Իսմայիլ Էֆ. Ի.

— Տէրսիմի Աշիւթիներուն մէջ իւր քաջութեամբ նշանաւոր՝ Սարրերի Մազկերտ գաւառակը բնակող Սուրիտէ Էյուպ աղա, նահանգին կեդրոնը դիմելով ներողութիւն խնդրած և հնազանդութիւն յայտնած է, խոստանալով որ ինքն և իւր որդիք յետ այսորիկ հաւատարմութեան ճամբէն չը շեղին և կառավարութեան ամէն հրամանաց հնազանդին։ Կուսակալութիւնը նկատելով որ Էյուպ աղա ցեղապետներու մէջ աղքատութիւն ունենալով, իւր այս ընթացք լու տպաւորութիւն մը պիտի ընէ բոլոր քրիստ ցեղերու վերայ, մեծարանքներ ըրած է նա, խոստանալով միջնորդել որպէս զի բարձրագոյն ներման արժանանայ։

— Քիւրտերէ և Արաբներէ կազմելի Համալիյէ հեծելազնդին պատկանող Արաբ Աշիւթիներու պետերն ևս այս օրերս մայրաքաղաքս պիտի գան։ Նոյն հեծելազնդին պատկանող Քիւրտ Աշիւթիներէն Պայազիտի Անթալ գաւառակը բնակող Հայտարանլը Աշիւթի պետերն ևս կարին ժամաներ են՝ մայրաքաղաքս գալու համար։

— Շէյխ-Իւլ-Իսլամի Դրան մէջ նպաստամատոյց յանձնաժողով մը կազմուած է՝ օգնելու համար հրդեհէ և այլ արկածներէ վնասեալ պաշտօնէից։

— Պահճէ Գարուի սեղանաւորներէն մին, հայազգի երիտասարդ մը, քանի մ'օրէ ի վեր անյայտ լինելով, հակառակ ամէն խուզարկութեանց՝ ուր լինելն չէ հասկցուած։

— Բ. Դրան կողմէ կատարուած քննութիւններէ հասկցուած է թէ Հայէպի նահանգին վիճակին նկատմամբ յառաջագոյն եղած բողոքներն յերկրուած են այն անձանց կողմանէ, որոնք վնասուած են օրինաց տրամադրութեան ի գործ դրուելէն։

— Կառավարական շրջանակաց մէջ մտադրութիւն կայ թուրքիոյ մէջ երկաթուղեաց շինութեան յատուկ ընդհանուր կանոնադիր մը պատրաստելու։ Կը խորհուի կեդրոնական Սնտուկ մը հաստատել, որուն գրամագլուխը երկրագործական գրամատուէր հայթայթեն իրենց հասութիւնց այն մասէն որ յատկացեալ է հանրօգուտ շինութեանց և երկրագործութեան ծաւալման։ Այս գրամագլուխ պիտի յատկացուի երկաթուղեաց շինութեան համար հանուելիք պարտատոմսից տոկոսի վճարման։ Երկաթուղիք՝ կառավարութեան ձեռամբ շինուելէ ետք, շահագործող ընկերութեանց վարձու պիտի տրուին և վարձակալութենէ առնուելիք գումարները պիտի յատկացուին կեդրոնական Սնտուկին, մասամբ կամ ամբողջովին հատուցանելու համար պարտատոմսից տոկոսեաց վճարման համար տրուած տարեվճարն։ Այս կերպով, պակասած գումարին տեղը պիտի լեցուի և կեդրոնական Սնտուկին գրամագլուխը պիտի յատկացուի նոր երկաթուղեաց շինութեան և այսպէս յաջորդաբար։

— ՅԱրապիկի, Եռսուֆ Էֆէնտի անուն օստիկան մը անցեալ կիրակէ գիշեր տեղւոյն նօտարին տունը հացկերպութի մը ներկայ գտնուելէ յետոյ՝ ժամը չին մեկնած և առաւօտուն փողոցին մէջ սպաննալ դիակը գտնուած լինելով, տեղական կառավարութիւնը ոճրին հեղինակները կը փնտռէ։

— Սարրերի Մալաթիաճը Ապտալ գիւղին մէջ ժանտառենդ երեան եղած լինելով, յատկապէս զրկուած բժիշկ մը հարկ եղած դարմաններն ի գործ դրած է։ Բժիշկին Դատմէ գիւղին մէջ դարմաններ է նաև 12ի չափ անձեր որք ժանտառենդէ, թոքատապէ և այլ հիւանդութիւններէ բռնուած էին։

— Ձմիւռնիոյ քարափանց արտօնատէր Պ. Տիւսոյի մենաշնորհի պայմանաժամուն վրայ 40 տարույ յաւելում՝ մ'եղած է՝ ի փոխարէն կատարելի ինչ ինչ շինութեանց։

— Ի Պրուսա, վերջին աւուրց սաստիկ ցուրտերը մեծապէս վնասած լինելով թթենեաց՝ որք արդէն տերեւներով ծածկուիլ ըսկած էին, կը կարծուի թէ այս տարի ևս բաւական տերեւ չը պիտի գտնուի շերամաբուծութեան պիտոյից բաւելու համար։

— Քաղաքապետութեան պաշտօնատան մէջ նոր դիւանատուն մը պիտի կազմուի՝ արհեստական տրոց գանձման հսկելու համար։

— Բարիլու մէջ կազմեալ գրամատուարց խումբ մը մենաշնորհ պիտի խնդրէ Սելանիկէն մինչև հելլենական սահմանագլուխը երկաթուղի մը շինելու համար։

— Ոստիկանութեան նախարար Վոնմ. Նազրմ պէյ Պոլսոյ կեդրոնական բանտն այցելելով և դիտելով որ բանտին մէջ գտնուած հիւանդանոցն ու յարկերը պիտոյից համապատասխանող ընդարձակութիւնը չունին, պէտք տեսած է ի նորոյ հիւանդանոցի մը ու չորս յարկերու շինութեան, և խնդիրը ներկայացուցած է ձեռնհաս իշխանութեան։

— Գարաքէյի կամուրջին առջև գրտնուած այն փայտեայ մասն, ուր կը մօտենան Մախսուսէի և Շիրքէթի շոգենաւք, ի նորոյ պիտի շինուի միաձև։ 12 տուպայք շինուած են արդէն։

— Հանրօգուտ շինութեանց ժողովը պատրաստած է տիպար պայմանագիր մը ու յանձնադիր մը, որք հիմն պիտի բռնուին յետ այսորիկ խնդրուելիք ամէկ տեսակ մենաշնորհներու։

— Հեռաձայնի փորձ մը կատարուեր է վերջերս Ձմիւռնիոյ և Տիւնէի միջև, այսինքն իր 377 քիլօմէթրի վրայ։

— Հալէպի նահանգին կշիռի տուրքն այս տարի 29489 դրուշի յաւելումը վարձակալութեան տրուած է, մինչդեռ անցեալ տարի 226 011 դրուշի տրուած էր։

— Մայրաքաղաքիս դրամատուարը ոմանք կը պատրաստուին Օսմանեան-ապաշովաքական ընկերութեան մը կազմութեան մենաշնորհը խնդրել։

— Հեռագրական և թղթատարական վարչութիւնն հիմնական կանոնադիր մը պատրաստած է՝ Թուրքիոյ մէջ թղթատարական վճարատոմսի (Մանուա Բօսթ) դրութիւնն ընդունելով գործադրելու համար։

— Կէլիպօլուի փարոսէն դէպ հիւսիւ-արեւելք տասը մղոն հեռաւորութեամբ փարոսանաւ մը հաստատուած է երկու սպիտակ լապտերներով, որք մինչև 10 մղոն հեռի լոյս կ'արձակեն։

— Հարենց Նշան Էֆ. մենաշնորհ խնդրած է ի Ձմիւռնիա Թրամուէյի նոր գիծ մը շինելու։

— Պոլսոյ Մեծ Ծուկային մէջ գտնուած խաներն ու խանութներն ևս յետ այսորիկ պիտի վճարեն հանրային մաքրութեան տուրքը (թանգիմաթ)։

«ՍԱՂԻԿ»-Ի ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՔ

Ամիսն Գարաիսար. Ս. Ը. Ձեր բաժանորդագիրը ստացանք։ Ձեր խնդրած գրքին ինչ լինելը չը հասկըցանք։

Նիկիմիլիս. Կ. Պ. Ձեր երկրորդ վեցամսեայն ստացանք։ Թերթերը կանոնաւորապէս կը զրկուին։ Գրեցէք, կը հրատարակուին։

Մալկարա. Ա. Յ. Ձեր հրատարակուած յօդուածներն յետ չեն դարձուիր։ Ղրկեցէք Ձեր յիշած թարգմանութեան առաջին գլուխը, որպէս զի գաղափար մը կազմեք։

Այնթապ. Ն. Ք. Դրամը յանձնուած տեղէն հաճեցէք փոխանակադիր առնուլ և մեղ զրկուլ, որպէս զի գանձուի։

Պարսիզակ. Գ. Մ. Ձեմը ընդունած այն գումարն որուն համար կը գրէք թէ զրկած էք։

Պեշիկթաւ. Կ. Ա. Կիստա ձեռագիր զրկելու աւելորդ աշխատութիւն է։

Սուկուրլու. Կ. Ե. Ձեր ուղած գրքերը զրկուեցան։ Փօստի ծախուց համար 110 փարա ևս կը պարտիք։

Տարսն. Կ. Կ. Ձեր բանեղինքն ընդունած եմք։

Վ Ի Պ Ա Կ

«Մաղիկ»ի վերջին թուոյն 5րդ երեսին 3րդ էջին մէջ վարէն համբելով 11րդ տողին ընդունուեցաւ բառը լուծուեցաւ պիտի կարդացուի։

Ա Ր Ժ Է Գ Կ Ի Ս Մ Ո Տ

Ըստ իրան 100 դր. էն

Մէճիսիլէ	108 14 Վեջնոց	403
Քառորդ մէճիս	108 10 Բաւիոյ բոլ	90 40
Մանր մէճիս	401 3 Կարալեռն	87 47
Մէթայիք	99 Գրեմից	54 45
Պէշիք	402 11 Գրգ. իրա	440 42

Թանկէ թղթագրութիւն 7 74

Գ. ձեռնարկէ (երեւոյն) 20 32 Գ. ձեռ. բաժին 76 1/4
Թանկիլ. Օսմ. 4 0/0 84 22 Թանկիլ. 47

ԱՐՏՕՆԱՏԻՐ Ա. ՍԱՔԱՆԱՆ

ՏՊԱԳՐ. ՆՏԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ